Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

(47.925)
U-21

1871

9(47.925)
Ս-81

ՆՈՐ

ԴԱՍԱԳԻՐՔ

ԱԶԳ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՎԱՒԵՐԱՅԵԱԼ

ՅՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԳՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ

ԳՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾ ԵՐԿՐՈՐԴ

Դ ՏՊԱՐԱՆԻ Յ. ՓԱՓԱԶԵԱՆ
Կ. ՊՕԼԻՍ ՎԷՍԼԻԹԱՆ
— 1871 —

37468

968 ՀՀ
3851-ա.

ՆՈՒԻՐԷ

ՀԱՅ ԳՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՆՇԱՆ

ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՅ ԵՒ ՋԵՐՄ ՅԱՐԳԱՆԱՑ

ԵՐԿԱՍԻՐՈՂՆ

1871 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

20 01 V
21749-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի վաղուց, վարժարաններու մէջ Ազգային պատմութեան դասախօսութիւնն ամենակարևոր ճանչուած է, բայց, ինչպէս, յայտնի է, մինչև ցարդ հրատարակուած դասագրքերն հին ձևի և միօրինակ ոճի մը հետևելով՝ դժուարին եղած էր այս պիտանի ուսման վրայ ուսանողաց ճաշակը գրգռել, և զ'այն ամեն հասակի դիւրիմաց և ախորժելի ընել։

Գործասէր Ընկերութիւնն ազգին օգտակար ծառայութիւն մ'ընելու մտօք ձեռնարկեց ներկայ դասագրքիս տպագրութեանն, և ահա ուրախութեամբ 'ի լոյս կ'ընծայէ զայն, յուսալով որ վարժարանաց մեծարգոյ հոգաբարձութիւններն ու դասատուք սորա արժանիքը ճանչնալով կը քաջալերեն նաև զ'Ընկերութիւնը։

Գործասէր Ընկերութեան Ուսումնական

ժողովը մասնաւորապէս ջանք ըրած է այս դասագիրքին իր տեսակին մէջ եղական ընելու համար, լեզուին, բաժանմանը, թուականներու և ուրիշ ասոնց նման կատարելութեանց ըստ ամենայնի ուշ դնել։

Իւրաքանչիւր համարներու հարցումներ դրուած չ'են. որպէս զի դասատուք զանոնք իրենց ուղած կերպովը հարցնեն. և աշակերտք ալ փոխանակ թուխակի պէս գոց ընելով պատասխանելու՝ միտքն հասկնան և կարող ըլլան ո և է կերպ հարցման պատասխանել։ Արդէն նկատեցուվ որ այս դասագիրքս մանր աղայք ալ պիտի կարդան՝ ուստի գործին սկզբնաւորութեանը մէջ խօսքերը կարճ կարճ կապուած և հետզհետէ աստիճանաբար երկընցած են. այս կէտն ուշադրութեան արժանի է։

Այս առթիւ կը յայտնենք նաև թէ Գործ. ընկերութեան Ռուսումնական ժողովը մտադիր է Աղգային վարժարաններու մէջ աւանդելի ուսմանց եղանակ մը պատրաստել և ըստ այնմ հետզհետէ զանազան ուսմանց և դիտութեանց ճիւղերու վերաբերեալ դիւրուսանելի, համառօտ և ժամանակին դասագրքեր հրատարակել։

Գործասէր ընկերութեան այս բարի նպատակը մեր կողմանէ քաջալերած ըլլալու յուսով՝ ներկայ դասագիրքն 'ի գիր առինք և իրեն նուիրեցինք իբր դոյզն աշխատասիրութիւն մ'և իբր աղդարար յառաջադիմասէր կարող Աղգայնոց՝ որ Հայ մանկութեան նպաստելու փափաքաւոր ձեռք կարկառեն առ Նոյն ընկերութիւնն և ուխտեն աշխատիլ Նորա հետ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ընդհանուր Գիծերէ։

Հայոց Ազգին Պատմութիւնը վեց դըլխաւոր Մասերու կը բաժնուի, որքեն։

Առաջին Մաս՝ Հայկազանց Իշխանութիւն։

Երկրորդ Մաս՝ Արշակունեաց Իշխանութիւն

Երրորդ Մաս՝ Մարզպանաց և Ռստիկանաց Իշխանութիւն

Չորրորդ Մաս՝ Բագրատունեաց Իշխանութիւն։

Հինգերորդ Մաս՝ Ռուբինեանց Իշխանութիւն

Վեցերորդ Մաս՝ Անիշխանութիւն։

ՄԱՍ Ա.

Հայկազանց Իշխանութիւն

Հայկազանց Իշխանութիւնը ըսկըսաւ Հայկ անունով մարդէ մը՝ Քրիստոսէ 2130 տարի առաջ, և 1800 տարի դիմա-

նալէ եւ.քը՝ վերջացաւ Հայոց Վահէ թագաւորին օրովը։

Հայկայ անունով մեր Ազգը ՀԱՅ կը կոչուի։

ՄԱՍՆ Բ.

Արշակունեաց Իշխանութիւն

Արշակունեաց Իշխանութիւնը Վաղարշակ անունով թագաւորէն սկսաւ՝ Քրիստոսէ 150 տարի առաջ, և 580 տարի դիմանալէ եւ.քը՝ վերջացաւ Արտաշէս Երրորդ թագաւորին օրովը։

Վաղարշակ Հայ չէր, այլ Պարթև ըսուած Ազգէն էր, և Հայոց թագաւոր եղաւ։

ՄԱՍՆ Գ.

Մարզպանաց և Ոստիկանաց Իշխանութիւն

Մարզպանաց Իշխանութիւնը Վեհմիհրշապուհ անունով իշխանէն սկսաւ՝ Քրիստոսէ 434 տարի եւ.քը, և 450 տարիի չափ Մարզպաններ և Ոստիկաններ կառավարեցին զՀայաստան. այս իշխաններուն ամենէն վերջինը եղաւ Աշոտ իշխանը՝ Քրիստոսէ 859 տարի եւ.քը։

Վեհմիհրշապուհ Հայ չէր, այլ Պարսիկ ըսուած Ազգէն էր։

ՄԱՍՆ Դ.

Բագրատունեաց Իշխանութիւն

Բագրատունեաց Իշխանութիւնը Աշոտ անունով իշխանէն սկսաւ՝ Քրիստոսէ 885 տարի եւ.քը, և 160 տարի դիմանալէն եւ.քը՝ վերջացաւ Գագիկ Երկրորդ թագաւորին օրովը։

Աշոտ թագաւորը՝ Հայոց Բագրատունի ըսուած ցեղէն էր։

ՄԱՍՆ Ե.

Ռուբինեանց Իշխանութիւն

Ռուբինեանց Իշխանութիւնը Ռուբէն անունով իշխանէն սկսաւ՝ Քրիստոսէ 1080 տարի եւ.քը, և 295 տարի դիմանալէ եւ.քը՝ վերջացաւ Լեւոն Վեցերորդ թագաւորին օրովը։

Ռուբէն՝ Բագրատունի ցեղէն էր։

———

ՄԱՍ Զ.

Անիշխանութիւն Հայոց

Քրիստոսի 1375 թուականէն մինչև այսօր՝ 496 տարի է՝ որ Հայերն իրենց իշխանութիւնը կորսնցուցած են, և իրենց Հայաստան երկիրը՝ երեք Տիրապետներու ձեռքն է։

Այս Տիրապետներն են, Տաճկի Սուլթանը, Ռուսի Կայսրը և Պարսկի Շահը։

—o—

ՄԱՍ Ա.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Իշխանութիւն Հայկազանց

Հայկազանց իշխանութիւնը՝ երեք դըլխաւոր ժամանակներու կը բաժնուի։

Այս ժամանակները կը կոչուին.

Ա. Տանուտէրական Նահապետութիւն։

Բ. Զինուորական Նահապետութիւն։

Գ. Թագաւորութիւն։

Ա.

ՏԱՆՈՒՏԷՐԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿ

1. Հայաստան մեր Հայրենիքն է, և մեր Նախահայրն եղաւ Հայկ։

2. Հայկ շատ զաւակներ՝ թոռներ և ծառայներ ունէր՝ որոնք երեք հարիւրէն աւելի էին։

3. Հայկ պատերազմ ըրաւ Բէլ անունով բռնաւոր մարդու մը դէմ, որով-

հետև Բէլ կ'ուզէր՝ որ Հայկ իրեն հնազանդի և Աստուծոյ պէս երկրպագութիւն ընէ իրեն։

4. Բէլ պատգամ ղրկեց Հայկայ՝ և ըսաւ «Եկուր ինծի հնազանդէ. ապա թէ ոչ՝ դքեզ և քու զաւակներդ կը մեռցնեմ»։

5. Հայկ աղատասէր էր և չուզեց Բէլայ հնազանդիլ. իր քիչ մը մարդիկները ժողվեց ու պատրաստուեցաւ՝ որ Բէլայ դէմ կռուի, և գնաց Վանայ Ծովուն քով։

6. Բէլ երկաթէ զրահներ հագած՝ շատ զօր քով Հայկայ վրայ եկաւ ու պատերազմեցաւ. բայց՝ Հայկ քաջութեամբ յաղթեց անոր զօրքերուն և նետով զարկաւ սպաննեց զԲէլը։

7. Հայկ՝ իր աղատութեան թշնամին աշխարհէս վերցնելուն համար՝ շնորհակալ եղաւ Աստուծոյ, և ուրախ սրտով տունը դարձաւ. և կ'ըսուի թէ 400 տարի ապրելէ ետքը մեռաւ։

8. Հայկայ յաջորդները եղան որդւոց որդի՝ Արմենակ. Արամայիս. Ամասիա. Գեղամ. Հարմայ։

9. Հայկ և իրեն յաջորդները՝ հայ-

բաբար և խաղաղութեամբ կառավարեցին մեր ազգը. և Հայաստանի մէջ քաղաքներ ու գիւղեր չինեցին. ասոնք՝ չ'ուզեցին ժողովրդեան վրայ իշխել և ժողովրդէն զօրք չառին, այս պատճառաւ Տանուտէրական Նահապետ կոչուեցան։

Բ.

ՉԻՆԻՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄ

10. Հարմայի մեռնելէն ետքը տեղը յաջորդեց Արամ։

Այս նահապետը քաջ և հայրենասէր մարդ մ'էր։

11. Արամայ ժամանակ՝ Բաբելացիները՝ Մարերը և Կապադովկացիները թշնամութեամբ Հայաստան արշաւեցին։

12. Արամ այս թշնամիներուն դէմ պատերազմելու համար՝ Հայոց կորիւնները ժողվեց ու զինուոր ըրաւ. այս պատճառաւ Զինուորական Նահապետ կոչուեցաւ։

13. Արամ՝ Հայոց 50000 կորիւն զօր-

քերովը Հայաստանի Թշնամեաց վրայ վազեց. զանոնք բոլորովին դուրս վռնտեց. ու անոնց իշխանները սարսափեցուց։

14. Արամ Կապադովկայոց երկրին տիրեց և բռնութեամբ հրամայեց՝ որ այն տեղի մարդիկը իրենց մայրական լեզուն ձգեն ու Հայերէն խօսին։

15. Արամ բարեկամ եղաւ Ասորեստանցւոց Նինոս Թագաւորին հետ. որովհետև Նինոս մարդրիտով զարդարուած թագը ընծայ ղրկեց Արամին, և գինքը մեծ Իշխան անուանեց։

16. Արամ 58 տարի իշխանութիւն ըրաւ և մեռաւ. Արամայ անունով օտար Ազգերը մեզի Արմէն կամ Էրմէնի կը կոչեն։

ԱՐԱՑ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԿԱՐԴՈՍ

17. Արամայ մեռնելէն ետքը՝ Հայոց Իշխան եղաւ իւր որդին Արայ. ասիկայ շատ գեղեցիկ մէկն ըլլալուն համար՝ Արայ Գեղեցիկ ըսուեցաւ։

18. Թամիրամ վատ և հեշտամոլ թագուհին՝ որ Նինոս թագաւորին կնիկն էր, Արայի գեղեցկութիւնը լսելով՝ ուզեց որ անոր հետ կարգուի, բայց Արայ առաքինի ըլլալուն՝ անոր խնդիրքը մերժեց։

29. Թամիրամ ուզեց՝ որ բռնութեամբ իր կամքը կատարէ, ասոր համար շատ զօրքով Հայաստան վազեց։

20. Արայ՝ Հայոց զօրքովը պատերազմեցաւ Թամիրամայ դէմ, բայց կռուելու ժամանակ զարնուեցաւ ու մեռաւ, և Հայերը յաղթուեցան։

21. Թամիրամ Հայաստանի տէր եղաւ՝ և մեծ ու գեղեցիկ քաղաք մը շինեց, և անունը դրաւ Թամիրամակերտ՝ ետքն այս քաղաքը Վան կոչուեցաւ։

22. Հայերը Թամիրամին բռնութենէն ազատելու համար պատերազմի ելան, բայց Թամիրամ զանոնք հանդարտեցուց, և Արայի Կարդոս անունով 12 տարեկան որդին՝ Հայաստանի իշխան դրաւ։

23 Անգամ մը Թամիրամ իր Նինուան տղուն դէմ պատերազմեցաւ. Կարդոսալ Թամիրամայ օգնութեան գնաց, բայց

թէ Շամիրամ և թէ Կարդոս այն պատերազմին մէջ մեռան։

24. Կարդոսի մեռնելէն ետքը Հայերը իրենց ազատութիւնը կորսընցուցին, և Ասորեստանցւոց հարկատու եղան։

25. Կարդոսի Անուշաւան որդին՝ իր հօրը մեռնելէն 14 տարի ետքը՝ Ասորեստանի Նինուա թագաւորին հրամանաւը Հայաստանի Նահապետ եղաւ։

26. Անուշաւանէն ետքը՝ 25 Նահապետներ իրարու ետեւէ Հայաստանի իշխան եղան, և ասոնց մէջ ամենէն երեւելի եղաւ Զարմայր Նահապետը։

27. Զարմայր՝ Հայոց զօրքերը ժողվեց և Տրովադա ըսուած քաղաքը գնաց. ու հոն պատերազմելու ժամանակ մեռաւ։

28. Արամին բոլոր յաջորդները Ազգային Նահապետ կոչուեցան, վասն զի ժողովրդեան զաւակները կ'առնէին և զօրք կ'ընէին։

Գ.

ՀԱՅԿԱԶԱՆՑ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՅՐ

29. Հայոց Առաջին թագաւորը եղաւ Պարոյր անունով մէկը՝ որ Սկայորդի Նահապետին տղան էր։

30. Պարոյր մեծ բարեկամութիւն մը ըրած էր Կիաքսար անունով մէկու մը՝ որ Մար ըսուած Ազգին թագաւորն էր. Կիաքսար ալ Պարոյրին գլուխը թագդրաւ, ձեռքը թագաւորական գաւազան տուաւ և գինքը Հայոց Թագաւոր անուանեց։

31. Պարոյրէն ետքը Հայոց վերայ քանի մը թագաւորներ նստան, աս թագաւորներուն մէջ ամենէն երեւելի եղաւ Մեծն Տիգրան Ա.։

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ Ա.

32. Տիգրան քաջ և խելացի թագաւոր մ'էր. Հայաստանը ծաղկեցուց. Հայերը հարուստ ըրաւ և Պարսից Կիւրոս թա-

դառորին հետ բարեկամ եղաւ։

33. Մարաց Աժդահակ թագաւորը՝ խարդախ մարդ մ'էր. Տիգրանին Տիգրանուհի քոյրը իրեն կին առաւ, և ուզեց՝ որ Տիգրանուհիին ձեռքով զՏիգրանը սպաննէ։

34. Տիգրանուհի դաղտնի կերպով՝ իր Տիգրան եղբօրը իմացուց Աժդահակայ չար միտքը. Տիգրան ալ Կիւրոսի հետ միանալով՝ Աժդահակայ դէմ պատերազմի եկաւ։

35. Տիգրան պատերազմեցաւ Աժդահակայ զօրացը դէմ և յաղթեց, Աժդահակն ալ սպաննեց՝ և անոր կինը ու որդիքը Հայաստան դերի բերաւ։

36. Մեծն Տիգրան՝ Տիգրանակերտ քաղաքը շինեց, և 45 տարի թագաւորելէն ետքը մեռաւ. իրմէ ետքը քանի մը թագաւորներ նստան Հայոց վրայ. ամենէն ետքի թագաւորը եղաւ՝ Վահէ։

ՎԱՀԷ

38. Վահէ պատերազմեցաւ Մակեդոնացւոց մեծն Աղէքսանդր թագաւորին դէմ. բայց յաղթուեցաւ ու մեռաւ, և

Հայկազանց թագաւորութիւնը կործանեցաւ։

ԿՈՒՍԱԿԱԼՔ

37. Վահէի մեռնելէն ետքը մեծն Աղէքսանդր Հայաստանի տիրեց, և իր կողմէն իշխան մը դրաւ Հայոց վրայ. առաջին իշխանին անունն էր Միհրան և Կուսակալ կը կոչուէր։

39. Միհրանէն ետք 150 տարիի չափ ուրիշ քանի մը իշխաններ ալ նստան Հայոց վրայ, և ամէնքն ալ Կուսակալ կը կոչուէին. Այս Կուսակալները Մակեդոնացւոց իշխանութեան ներքև էին։

ՄԱՍՆ Բ.

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

1. Արշակունեաց իշխանութիւնը երիւ գլխաւոր ժամանակներու կը բաժնուի, որք են։

Ա. Ազատ Թագաւորութիւն։

Բ. Հարկատու Թագաւորութիւն։

Ա.

ԱԶԱՏ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱԿ

2. Պարթև ըսուած Ազգին Արշակ թագաւորը՝ շատ զօրացած ըլլալով Մակեդոնացիները Հայաստանէն վռնտեց, և իր Վաղարշակ անուն եղբայրը Հայոց վրայ թագաւոր դրաւ։

3. Արշակայ անունով մեր այս թագաւորութիւնն ալ Արշակունեաց իշխանութիւն կոչուեցաւ։

4. Վաղարշակ քաջ և իմաստուն թագաւոր մ'եղաւ։ Հայերը սիրեց. և անոնց կարգ ու կանոն սովրեցուց. շատ զօրք ժողվեց և բանակ կազմեց։

5. Վաղարշակ պատերազմ ըրաւ Կապադովկիայի Մորփիւղիկէս իշխանին դէմ. յաղթեց անոր. և Հայոց քաջութիւնը տեսնելով ուզեց որ Հայոց պատմութիւնը կարդայ, և իմանայ թէ ո՞վ է Հայոց Նախահայրը։

6. Վաղարշակ Հայաստանի մէջ Հայոց պատմութիւնը չը կրցաւ գտնել, որովհետև հին ժամանակի Հայերը տգէտ էին, ուս՝ չ դիր ունէին և ոչ ուսմունք։

7. Մար Աբաս Կատինա անունով մարդ մը՝ Ասորեստան գնաց և Նինուէ քաղքին մէջ Հայոց պատմութիւնը գտաւ՝ առաւ Վաղարշակին բերաւ։

8. Վաղարշակին յաջորդեց Արշակ Ա. որ Պոնտացւոց դէմ պատերազմ ըրաւ ու յաղթեց. Արշակ Ա.ին ալ յաջորդեց Արտաշէս Ա.։

ԱՐՏԱՇԷՍ Ա.

9. Արտաշէս Ա. հզօր և փառասէր թագաւոր մ'էր. անհամար զօրք ժողվեց. Պարթևներուն, Պարսիկներուն, Յոյներուն և ուրիշ զանազան ազգերու դէմ պատերազմ ըրաւ ու յաղթեց։

10. Արտաշէսի զօրքերը այնչափ շատ էին՝ որ եթէ ամենքը մէկ մէկ քար նետէին՝ բլուր մը կը ձևանար. և եթէ մէկ մէկ նետ նետէին՝ Արևուն լոյսը կը խաւարէր։

11. Այս անթիւ զօրքերը 25 տարի Արտաշէսին հրամանաւը պատերազմ ըրին. բայց ուղելով անոր բռնութենէն ազատիլ՝ խռովութիւն մը հանեցին և Արտաշէսը սպաննեցին. Արտաշէս մեռնելու ատենը ըսաւ — Աւա՜ղ քաջաց Անցաւոյ —

ՏԻԳՐԱՆ Բ. 90 — 36

12. Տիգրան Բ. Արտաշէսի որդին՝ իր հօրը տեղը թագաւորեց Հայոց վրայ. և շատ զօրք ժողվելով Հայաստանի թշնամիները վռնտեց։

13. Տիգրան Բ. իր Միհրդատ քեռայրը Պոնտոսի վրայ թագաւոր դրաւ. այս Միհրդատը՝ հզօր, քաջ և խելացի մարդ մ'էր. երկար ժամանակ մեծամեծ պատերազմներ ըրաւ Հռովմայեցւոց դէմ։

14. Հռովմայեցւոց զօրքին զօրավարն էր նախ Սիլլա՝ և ետքը Ղուկուղղոս։ Միհրդատ՝ Տիգրանայ օգնութեամբը շատ անգամ յաղթեց Հռովմայեցւոց։

15. Տիգրան՝ անգամ մը անխոհեմութեամբ յաղթուեցաւ Ղուկուղղոսէն. և Ղուկուղղոս Տիգրանակերտ քաղաքին տիրեց՝ մէջի բոլոր հարստութիւններն ալ յափշտակեց։

16. Ղուկուղղոսէն ետքը՝ Հռովմայեցւոց զօրավար եղաւ՝ Պոմպէոս. սորատենը՝ Միհրդատին տղան Փառնակէս՝ սոսկալի վատութեամբ ուզեց՝ որ իր հայրը Պոմպէոսին ձեռքը մատնէ։

17. Միհրդատ՝ իր որդւոյն ձեռքէն նեղը մնալով՝ թոյն խմեցուցեալ՝ ալ ինքզինքը զարկաւ։ Այնպէս մեռաւ 72 տարեկան։

18. Տիգրան ալ իր ծերութեան ատենը

21749-00 (37468)

Պոմպէոսին հետ հաշտուեցաւ և շատ երկիրներ տուաւ Հռովմայեցւոց. բայց Հռովմայեցիք կ'ուզէին՝ որ Հայաստանի ալ տիրեն։

19. Տիգրան՝ Հռովմայեցիներէն ազատելու համար՝ Պարսից Արշէզ թագաւորին հետ միացաւ. շատ զօրքով պատերազմ ըրաւ Կրասոս անուն Հռովմայեցի զօրավարին դէմ. յաղթեց զօրացը՝ և Կրասոսն ալ սպաննեց։

ԱՐՏԱՒԱԶԴ. Ա.

36-32

20. Տիգրան՝ 54 տարի թագաւորելէն ետքը՝ մեռաւ, և իրեն յաջորդեց՝ իր Արտաւազդ Ա. որդին. բայց այս Արտաւազդը իր հօրը նման քաջ և հզօր չ'էր։

21. Հռովմայեցիք Հայոց շատ մը երկիրներուն տիրեցին. Արտաւազդը խարդախութեամբ բռնեցին, և ոսկի շղթայի զարնելով՝ Եգիպտոս գերի տարին՝ ու հոն գլուխը կտրեցին։

ԱՐՇԱՄ

32-3

22. Արտաւազդայ մեռնելէն ետքը՝ Տիգրանին եղբօրը տղան՝ Արշամ՝ շատ զօրք ժողվեց. Հայաստանի մէջ եղող Հռովմայեցիները սպաննեց, և Հայոց վրայ թագաւոր եղաւ։

23. Արշամ վախցաւ Հռովմայեցւոց Օգոստոս Կայսրէն՝ և անոր սիրտը առնելու համար՝ խոստացաւ որ ամէն տարի տուրք տայ Հռովմայեցւոց։ Արշամէն ետքը բոլոր Հայոց թագաւորները Հռովմայեցւոց հարկատու եղան, և Հայոց աղօտ թագաւորութիւնը վերցաւ։

Բ

ՀԱՐԿԱՏՈՒ ԹԱԴԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱԲԳԱՐ

3-35 Գ. Ե.

24. Աբշամայ յաջորդեց իր Աբգար որդին. ասոր թագաւորութեան առաջին տարիները՝ Յիսուս Քրիստոս ծնաւ Հրէաստանի մէջ Բէթղէհէմ քաղաքի մէջ։

25. Աբգար՝ ազնիւ և իմաստուն թագաւոր մը եղաւ. Հայաստանը ծաղկեցուց. Հայոց թշնամիներուն դէմ պատերազմ ըրաւ, յաղթեց ու վանեց զանոնք։ յետոյ Հռովմ գնաց և Օգոստոս Կայսեր շատ սիրելի եղաւ։

26. Պարսից թագաւորին տղաքը խռովեր էին մէկ մէկու հետ, Աբգար Պարսկաստան գնաց՝ որ զանոնք խաղաղեցնէ, ու հոն բորոտութիւն եկաւ Աբգարու վրայ։

27. Աբգար՝ երբոր Հայաստան դարձաւ, լսեց որ Քրիստոս Երուսաղէմի մէջ մեծամեծ հրաշքներ կը գործէ. մարդ ղրկեց ու աղաչեց Քրիստոսի՝ որ Հայաստան գայ ու զինքը բժշկէ։

28. Քրիստոսի երկինք համբառնալէն ետքը՝ Թադէոս և Բարթողիմէոս առաքեալները Հայաստան եկան. Աբգարը բժշկեցին. Սուրբ Աւետարանը Հայաստանի մէջ քարոզեցին, և Հայերը մկրտելով քրիստոնեայ ըրին։

29. Աբգար՝ քրիստոնեայ ըլլալէն ետքը՝ երեք տարի ալ ապրեցաւ, ու 38 տարի թագաւորելէն ետքը խաղաղութեամբ մեռաւ։

ԱՆԱՆԷ. ՍԱՆԱՏՐՈՒԿ

35-65

30. Աբգարէն ետքը եկող թագաւորները եղան՝ Անանէ և Սանատրուկ. ասոնք՝ Հայոց Նախարարներուն հետ միանալով՝ քրիստոնէութիւնը ուրացան. նորէն կռապաշտ եղան, և շատ մարդիկ ալ մեռցուցին քրիստոնեայ ըլլալնուն համար։

31. Սանատրուկ իր Սանդուխտ աղջիկը մեռցնել տուաւ, որովհետև Սան-

դուխտ քրիստոնեայ էր և կռապաշտութիւնը չ'էր ընդուներ. անկէ զատ՝ Սանատրուկ ապաննել տուաւ նաև Թադէոս առաքեալը։

32. Հայոց ժողովուրդը՝ երբոր այս բռնութիւնները տեսաւ, մեծ մասը սոսկալով նորէն կռապաշտ եղաւ, և Հայաստանի մէջ միայն քանի մը խեղճ Քրիստոնեայներ մնացին։

ԵՐՈՒԱՆԴ

65-85

33. Սանատրուկի մեռնելէն ետքը՝ Երուանդ անունով իշխան մը Սանատրուկին բոլոր զաւակները մեռցնել տուաւ, և ինքը թագաւորեց Հայոց վրայ։

34. Այս մեծ կոտորածէն՝ միայն Արտաշէս անունով պզտիկ տղայ մը ազատեցաւ։ Բագրատունի ըսուած ցեղին Սմբատ իշխանը՝ այս տղան Երուանդին ձեռքէն փախցուց և Պարսից թագաւորին տարաւ։

35. Արտաշէս Սմբատայ հետ Պարսից երկիրը մնաց՝ մինչև որ մեծցաւ։ Երուանդ ջանք ըրաւ որ զԱրտաշէս սպաննելու տայ. բայց չը յաջողեցաւ. ուստի շատ զօրք ժողվեց՝ որ բռնութեամբ իւր չար կամքը կատարէ։

36. Պարսից թագաւորը շատ զօրքով Արտաշէսը Սմբատին հետ Հայաստան խաւրեց՝ որ երթայ թագաւոր ըլլայ. Արտաշէս ալ եկաւ՝ խիստ մեծ պատերազմ մը ըրաւ Երուանդայ դէմ։

37. Պատերազմին ժամանակը՝ Հայոց քաջ զօրքերը Արտաշիսի կողմը անցան. Երուանդ յաղթուեցաւ և սպաննուեցաւ. Արտաշէս ալ թագաւոր պսակուեցաւ Հայոց վրայ։

ԱՐՏԱՇԵՍ Բ.

85-127

38. Արտաշէս Բ. քաջ և բարի թագաւոր մ' եղաւ. իրեն աղէկութիւն ընողներուն շատ պատիւներ տուաւ. Հայաստանի մէջ ամէն տեղ երկրագործութիւնը ու արուեստները ծաղկեցուց. և Հայերը երջանիկ ազգ մը ըրաւ։

39. Սանք ըսուած ազգին թագաւորը՝ շատ զօրքով Հայաստան յարձակեր էր, Արտաշէս Բ, Սմբատայ օգնութեամբը առնոր յաղթեց. ետքը հեռը հաշտութիւն ըրաւ և անոր Սաթենիկ անունով աղջիկը իրեն կին առաւ։

40. Արտաշէս՝ Արտաւազդ անունով տղայ մը ուներ. ասիկայ չարութեամբ նախանձեցաւ Սմբատին և ուրիշ քանի մը նախարարներու վրայ, և անգթաբար ըսպաններ տուաւ անոնցմէ շատերը։

41. Արտաշէս Բ. 41 տարի թագաւորեց ու մեռաւ. բարի թագաւոր մը ըլլալուն՝ Հայերը շատ կը սիրէին զինքը։

ԱՐՏԱՇԵՍԻ ՔԱՆԻ ՄԸ

ՑԱՔՈՐԴՆԵՐԸ

127-213

42. Արտաշէսի մեռնելէն ետքը թագաւոր եղաւ Արտաւազդ Ա. որ բարկացող ու չարասիրտ ըլլալուն՝ հայերը զինքը չը սիրեցին. ասիկայ օր մը ձի հեծաւ

և լեռը պտըտելու ատեն՝ խորունկ փոսի մը մէջ ինկաւ ու խեղդուեցաւ։

43. Արտաւազդ Բ. էն ետքը՝ մէկմէկու ետեւէ Հայոց թագաւոր եղան՝ իր Տիրան Ա. և Տիգրան Բ. եղբայրները. Տիգրանին ալ յաջորդեց իր որդին Վաղարշ։

44. Հիւսիսային լեռնցի եւ վայրենի ազգերը՝ շատ զօրքով Հայաստան յարձակեր էին. Վաղարշ Հայոց զօրքերը ժողվեց, դէմերնին ելաւ, հետերնին պատերազմեցաւ և փախցուց. բայց ինքն ալ զարնուեցաւ ու մեռաւ. Վաղարշ Հայրենասէր կոչուեցաւ։ 193-213

ՄԵԾՆ ԽՈՍՐՈՎ.

213-261.

45. Վաղարշէն ետքը՝ Խոսրով իր հօրը տեղ՝ Հայոց թագաւոր եղաւ. շատ զօրք ժողվեց և Հիւսիսային վայրենիներուն դէմ պատերազմելով իր իշխանութեան ներքև առաւ զանոնք.

46. Խոսրով բարեկամ էր Պարսից

Արտաւան թագաւորին հետ, վասն զի երկուքն ալ Արշակունի էին. բայց Պարսից նախարարաներէն Արտաշիր Սասանեան անունով մէկը՝ եկաւ Արտաւանը սպաննեց, և ինքը թագաւոր եղաւ։

47. Խոսրով պատերազմի եկաւ Արտաշիրի դէմ. տասը տարի կռուեցան հետը՝ և մինչև Հնդկաստան ըսուած երկիրը փախուց։

48. Արտաշիր՝ իր նախարարաց հետ խորհուրդ ընելով՝ Անակ անունով իշխանը Հայաստան խաւրեց՝ որ երթայ խարդախութեամբ Խոսրովը սպաննէ։

49. Անակ՝ Խոսրովին ազգականն էր. եկաւ Հայաստան. երկու տարի կեցաւ. և օր մը օրսի ատեն յանկարծ Խոսրովին վրայ վազեց ու դանակով զարկաւ զանի. բայց ինքն ալ փախչելու ատեն գետընկաւ ու խեղդուեցաւ։

50. Խոսրով՝ 48 տարի թագաւորելէն ետք՝ այսպէսով սպաննուեցաւ. Անակին բոլոր ընտանիքը ջարդուեցան. միայն Անակին մէկ տղան ազատեցաւ. այս տղուն

անունն էր Գրիգոր՝ որ ետքը Լուսաւորիչ ըսուեցաւ։

ՊԱՐՍԻԿՔ

Ի ՀԱՅԱՍՏԱՆ 261 - 287

51. Խոսրովին մեռնելէն ետքը՝ Արտաշիր՝ Պարսից զօրքով եկաւ Հայաստանի տիրեց, և Խոսրովին բոլոր ընտանիքը թերէ անցուց։

52. Խոսրովին երկու զաւակները ազատեցան Արտաշիրի ձեռքէն. ասոնցմէ մէկն էր մանչ մը՝ Տրդատ անունով, և միւսն ալ՝ Խոսրովիդուխտ անունով աղջիկ մը։

53. Տրդատ՝ Հռովմ քաղաքին մէջ մեծցաւ, զարմանալի քաջութիւններով բոլոր Հռովմայեցւոց սիրելի եղաւ, և 26 տարեկան Հայաստան դարձաւ Պարսիկները վռնտեց ու ինքը թագաւորեց Հայոց վրայ։

ՏՐԴԱՏ ՄԵԾ

287-343

54. Տրդատ՝ հաւատքը հանեց Հայաստանի մէջ եղող բոլոր Քրիստոնէից

վրայ, և շատ չարչարեց զանոնք. Անակին տղան Ս. Գրիգոր լուսաւորիչն ալ տանջեց ու ստիպեց՝ որ քրիստոնէութիւնը թողու և կռապաշտ ըլլայ.

55 Տրդատ երբ լսեց որ Ս. Գրիգոր՝ իր Խոսրով հայրն սպաննող Անակին որդին է, խոր վիրապի մը մէջ նետել տուաւ:

56. Հռոմի քաղաքէն քանի մը քրիստոնեայ աղջիկներ Հայաստան եկեր էին. այս աղջիկներուն հետ էր Ս. Հռիփսիմէ կոյսը. Տրդատ ուզեց որ Հռիփսիմէ քրիստոնէութիւնը ձգէ և իրեն կին ըլլայ. բայց երբոր Հռիփսիմէ այս բանը յանձն չառաւ, Տրդատ ալ անողորմաբար սպաննել տուաւ զինքն ու իր ընկերուհիները:

57. Հռիփսիմէի սպաննուելէն ետքը՝ Տրդատ խենդեցածի մը պէս լեռները փախաւ, այն տեղն Խոսրովիդուխտ Տրդատայ քոյրը՝ մարդ ղրկեց Ս. Գրիգորը խոր վիրապէն հանել տուաւ:

58. Ս. Գրիգոր՝ Տրդատը և բոլոր Հայերը քրիստոնեայ ըրաւ ու մկրտեց Քրիստոսէ 303 տարի ետք՝ և Հայաստանեայց

ուղղափառ եկեղեցին հաստատելով՝ Լուսաւորիչ կոչուեցաւ:

59. Ս. Գրիգոր՝ Տրդատին օգնութեամբը Ս. Էջմիածին անուն վանքը շինել տուաւ Հայաստանի մէջ. այս վանքը մինչև հիմա կայ, և հոն կը նստի մեր Սրբազան Կաթողիկոսը:

60. Տրդատ՝ հայոց քուրմերէն շատերը ջարդեց քրիստոնեայ չըլլալնուն համար. և Ս. Գրիգորին խորհրդովը Հայաստանի մէջ գտնուած բոլոր գրքերը այրել տուաւ:

61. Տրդատ շատ պատերազմներ ըրաւ Պարսից Շապուհ թագաւորին ու հիւսիսային ազգաց դէմ. միշտ յաղթեց անոնց, և Հայաստանի բոլոր թշնամիները՝ ստրատեցուց:

62. Տրդատայ ժամանակը՝ Հռոմայեցւոց Կայսր եղաւ Մեծն Կոստանդիանոս. Աստիկայ՝ Բիւզանդիոն անունով քաղաքը նորոգեց ու մեծցուց և աթոռը հոն փոխադրեց. քաղաքին անունն ալ փոխեց ու Կոստանդնուպոլիս դրաւ:

63. Տրդատ բարեկամ եղաւ Կոս-

տանդիանոսի հետ, որովհետև Կոստանդիանոս քրիստոնեայ եղեր էր. այս երկու թագաւորները մէկմէկու հետ բարեկամութիւն հաստատեցին։

64. Տրդատ միշտ կը հանդիպէր Հայոց նախարարները՝ որ բարի և առաքինի կեանք ունենան, ժողովուրդը չը չարչարեն՝ և իրեն հետ միաբան ըլլան. բայց անոնք՝ շար մարդիկ ըլլալով՝ Տրդատը մեռցընել ուզեցին։

65. Տրդատ՝ տեսնելով որ նախարարները միշտ դէշութիւններ կը գործեն, թագաւորութիւնը ձգեց. այն տեղն նախարարներն ալ թոյն տուին և սպաննեցին երանելի թագաւորը՝ որ 56 տարի թագաւորեց և 85 տարի ապրեցաւ։

64. Տրդատ՝ չըմեռած Նիկիա ըսուած քաղաքին մէջ քրիստոնէից մեծ ժողով մը եղաւ, և հոն գրուեցաւ հաւատոյ հանդանակ ըսուածը՝ որ է Հաւատամք Ն. Ս. Պատարագ կայցն։

65. Ս. Գրիգոր լուսաւորչին պզտիկ տղան՝ Արիստակէս Հայրապետն՝ այս Հանգանակը Հայոստան բերաւ։ Տրդատայ մեռնելէն առաջ Ս. Գրիգոր լուսաւորիչ այրի մը մէջ ճգնութիւն ընելու տեղն մեռաւ։

ԽՈՍՐՈՎ Բ.

ԵՒ

ՏԻՐԱՆ Բ. 343-364

66. Ս. Գրիգոր լուսաւորչի մեռնելէն ետքը՝ Հայոց կաթողիկոս եղած էր Ս. Արիստակէս. անոր նախարարները զանի սպաննեցին, և շատ զօրք ժողուելով՝ սկսան մէկմէկու դէմ պատերազմիլ. ու անխնայ մարդ ջարդել։

67. Ս. Գրիգոր լուսաւորչին մեծ տղան Վրդանէս Հայրապետ՝ խելացի նախարարաց հետ միանալով՝ Տրդատայ որդին Խոսրովը Հայոց թագաւոր դնել տուաւ. Խոսրով Բ. ին ալ յաջորդեց իր որդին Տիրան Բ.։

69. Այս երկու թագաւորները տարկար և թոյլ մարդիկ եղան. պարսիկներն ալ սկսան հարձակիլ թշնամութիւն ընել

Հայոց գէմ. Տիրան՝ պարսից Շապուհ թագաւորէն վախնալով՝ անոր հետ հաշտութիւն ըրաւ։

69. Տիրան՝ Ս. Յուսիկ կաթուղիկոսը ծեծելով մեռցուց. Շապուհին գէմ ալ խարդախութիւն ըրաւ. Շապուհ ալ զինքը խափելով պարսկաստան կանչեց, և հոն ոչուքները հանել տուաւ։

ԱՐՇԱԿ Բ,

364-382

70. Արշակ Բ. յաջորդեց իր Տիրան հօրը. ասիկայ իր անխելքութեամբը շատ անկարգութիւններ ըրաւ. շատ անմեղ մարդիկ սպաննեց. նաև իր Տիրան հայրը խեղդել տուաւ. թէ յունաց և թէ պարսից հետ թշնամի եղաւ, և զՀայաստան թշուառացուց։

72, Արշակայ ժամանակ Երեւելի եղաւ Մեծն Ներսէս Կաթողիկոս՝ Հայաստանի անմահ բարերարը. ասիկայ Ս. Գրիգոր լուսաւորչին թոռանը թոռն էր,

շատ հիւանդանոցներ, որբանոցներ, և վարժարանները շինեց, ու ժողովրդեան դատակները ժողուելովուսմունքով և դիտութեամբ կրթել կուտար։

72. Արշակ իր տկարութեանը չընայելով՝ շատ անգամ կ'ուզէր ապստամբիլ Յունաց կայսերէն. Ս. Ներսէս Պոլիս երթալով կայսեր բարկութիւնը կ'իջեցներ. բայց Վաղէս անունով կայսրը՝ Ս. Ներսէսը հեռու տեղ մը աքսորեց։

73. Արշակ՝ քաղաք մը շինեց և անունը դրաւ Արշակաւան, հրաման ըրաւ՝ որ ամէն չարագործ մարդիկ հոն փախչին և ազատին. մէկէն շատերը սկսան մէկըմէկ մեռցընել, ուրիշին ունեցածը յափշտակել և Արշակաւան փախչիլ. նախարարները միացան, դացին Արշակաւանը կործանեցին և մէջի բնակիչները սպաննեցին։

74. Ս. Ներսէս Արշակաւանին մէջ գտնուող պղտիկ տղայքը ազատեց. անոնց համար դպրոցներ բացաւ և կրթեց զանոնք։

75. Անգամ մը նախարարները բարկացան և Արշակը Պարսից Շապուհ թա-

գաւառին ձեռքը մատնեցին. Շապուհ ալ բռնեց զինքը՝ Անյուշ բսուած բերդը դրաւ։

76. Արշակին բռնուելէն ետքը՝ Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան երկու չարագործ նախարարներ՝ կռապաշտ եղան. Պարսից Թագաւորէն շատ զօրք առին և զՀայաստան արիւնով ու կրակով աւերեցին. շատ գերքեր այրեցին՝ Արշակին Փառանձեմ անունով կինն ալ սպաննեցին։

77. Արշակ՝ Անյուշ բերդին մէջ՝ այս եղածները լսելով՝ յուսահատութենէն դանակով զարկաւ ինքզինքը սպաննեց 20 տարի թագաւորելէն ետքը։

ՊԱՊ

382-388

78. Յունաց Թէոդոս Կայսրը՝ Արշակ Բ.ին Պապ անունով տղան շատ զօրքով Հայաստան դրկեց Ս. Ներսէսին հետ, որպէս զի երթայ Մեհրուժանը և Պարսիկները Հայաստանէն վռնտէ, և թագաւոր ըլլայ։

79. Պապ՝ Հայոց և Յունաց զօրքովը՝

խիստ մեծ պատերազմ մը ըրաւ Պարսից և անոնց դաշնակից եղող ազգերուն դէմ։ Այս պատերազմին մէջ Հայերը յաղթեցին և Մեհրուժան սատկեցաւ։

80 Պապ՝ Հայոց վրայ թագաւոր եղաւ, բայց մոլի և վատասիրտ ըլլալուն՝ քիչ ատենէն սկսաւ դէշութիւններ ընել. սոսկալի անգթութեամբ Ս. Ներսէսը թունաւորելով մեռցուց՝ որովհետև Ս. Ներսէս զինքը կը խրատէր ու կը յանդիմանէր գործած չարիքներուն համար։

81. Թէոդոս՝ զՊապը Կ. Պոլիս կանչեց, գլուխը կտրել տուաւ, և տեղը թագաւոր դրաւ Վարազդատ անունով Արշակունի իշխանը։

82. Հայաստանի մէջ յոյն զօրապետներ կային. ասոնք կ'ուզէին որ Վարազդատայ վրայ իշխեն. Վարազդատ Պոլիս գնաց՝ որ անոնց ըրածին դէմ բողոքէ Կայսեր առջև, բայց Կայսրը՝ առանց դատաստան տեսնելու՝ անիրաւութեամբ աքսորեց զՎարազդատ երկու տարի թագաւորելէն ետքը։

Վ. Ա. Ր Ա. Զ Դ Ա. Տ Ա. Ց

Ց Ա. Զ Ո Ր Դ Ն Ե Ր Ը 392—400

83. Վարազդատէն եաքը՝ Թէոդոս Հայոց վրայ երկու թագաւոր դրաւ, որպէս զի միշտ իրարու դէմ պատերազմելով տկար մնան և իրմէ չ'ապստամբին։ Այս երկու թագաւորներն եղան՝ Պապին որդիքը Ա. Բշակ Գ. և Վաղարշակ Բ. բայց Վաղարշակ մէկ տարիէն մեռաւ։

84. Քիչ ատենէն Յոյնք և Պարսիկք մէջերնին բաժնեցին Հայաստանը. անանկ որ՝ Հայոց մէկ մասը Յունաց հարկատու մնաց՝ մէկ մասն ալ Պարսից։

85. Ա. Բշակ Գ. Յունաց մասին թագաւոր եղաւ, Խոսրով Գ. ալ Պարսից մասին. ասոնք՝ սաստիկ պատերազմ ըրին մէկ մէկու դէմ, և Ա. Բշակ յաղթուելով մեռաւ։

86. Խոսրով բոլոր Հայաստանի վրայ թագաւորեց. բայց Պարսիկք դինքը բռնեցին, Անյուշ բերդին մէջ բանտարկեցին և տեղը թագաւոր դրին իր Վռամշապուհ եղբայրը։

Վ Ռ Ա Մ Շ Ա Պ Ո Ւ Հ

400-421

86. Վռամշապուհ՝ բարի խաղաղասէր և ուսման փափաքող թագաւոր մ'եղաւ. ասոր ատենը՝ Հայաստանի մէջ երևելի եղան Ս. Սահակ Պարթև Հայրապետը՝ և Ս. Մեսրոպ դիտնական Վարդապետը։

88. Հայերը մինչև այն ատեն իրենց յատուկ գիր չունէին. Մեսրոպ վարդապետ մեծ աշխատութիւնով դտաւ Հայոց երեսուն և վեց գիրերը՝ — էն մինչև ֆ, անոր համար «Մեսրոպեան տառք» ըսուեցան։

89. Ս. Մեսրոպայ և Ս. Սահակայ խորհուրդովը՝ Վռամշապուհ շուտ մը Հայաստանի ամեն կողմը դպրոցներ բացաւ. ազգին զաւակները կրթել տուաւ. քանի մը տղայ ալ օտար երկիրներ ղրկեց ուսում և դիտութիւն սովրելու համար։

90. Այս տղաքներէն շատերը՝ երբոր մեծցան՝ երևելի մարդիկ եղան. ինչպէս, Եղնիկ, Եղիշէ, Կորիւն, Ղազար Փարպեցի և ուրիշներ. ասոնք շատ գրքեր գրեցին ու թարգմանեցին, Հայոց լեզուն ծաղկե-

ցուցին . անոր համար անոնց ժամանակը կը կոչուի , ՈՍԿԵԴԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ :

Վ. ՌԱՄԵԱՊՈՒՀԻՆ

ՑԱՋՈՐԴՆԵՐԸ 421—433

91 . Վռամշապուհ 22 տարիէն երբոր մեռաւ , Հայոց նախարարները մէկմէկու հետ անմիաբան ըլլալով՝ թող տուին որ պարսիկները ուզածնին ընեն . անոնք ալ Խոսրով Գ . ը բանտէն հանելով՝ թագաւոր դրին . և երբոր անիկայ մէկ տարիէն մեռաւ , պարսից թագաւորը՝ իր Շապուհ տղան Հայոց վրայ թագաւոր պսակեց :

92 . Շապուհ՝ Հայոց նախարարներին նախատինք կրեց , և ձգեց թագաւորութիւնը . Պարսիկք Վռամշապուհին Արտաշէս Գ . անունով 18 տարեկան տղան՝ Հայոց վրայ թագաւոր դրին :

93 . Արտաշէս Գ . ախտամոլ տղայ մ՚էր . Հայոց նախարարները՝ փոխանակ Հայաստանի աղէկութիւնը մտածելու՝ ամենը մէկէն պարսից թագաւորին դայլին ,

և աղաչեցին որ Հայոց թագաւորութիւնը կործանէ :

94 . Հայաստան արդէն տկարացեր էր . Պարսից թագաւորն ալ կուզէր որ կամաց կամաց Հայերը պարսիկ ընէ . ուստի մաանիկ նախարարները Հայաստան ղրկեց , և Արտաշէսը՝ Պարսկաստան բերելով՝ հեռու տեղ մը աքսորեց :

95 . Ս . Սահակ՝ շատ աղաչեց նախարարներուն՝ որ այս սոսկալի աղէտը չբերեն Հայաստանի վրայ . և իմացուց՝ որ պարսիկները Հայոց թագաւորութիւնը ջնջելէ ետքը՝ Հայոց Ս . կրօնքը և Աղդութիւնն ալ ջնջելու պիտի աշխատին :

96 . Անմիտ նախարարները այս խօսքերը բանի տեղ չդրին , և պարսից թագաւորին հաճելի ըլլալու համար՝ Ս . Սահակը ամբաստանեցին . պարսից թագաւորն ալ ղինքը պարսկաստանի մէջ արգիլեց և կաթողիկոսութենէ ձգեց :

Արշակունեանց թագաւորութիւնը կործանեցաւ Քրիստոսէ 433 տարի ետքը :

ՄԱՍ Գ.

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԵՒ ՈՍՏԻԿԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

1. Մեր ազգին պատմութեան այս երրորդ մասը՝ երկու դլխաւոր ժամանակներու կը բաժնուի, որք են.

Ա. Մարզպանաց Իշխանութիւն
Բ. Ոստիկանաց Իշխանութիւն

Ա.

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ՎԵՀՄԻՀՐՇԱՊՈՒՀ

434-448

2. Արշակունեաց թագաւորութիւնը հետզհետէ տկարացաւ Հայոց տգիտութեանը պատճառաւ, և նախարարները բոլորովին կործանեցին զ'այն. և այն տեղն պարսից թագաւորը Հայաստանի տիրելով՝ իր կողմէն Մարզպան կոչուած իշխան մը կը դրկէր Հայաստան՝ որ Հայերը կը կառավարէր և տուրք կը ժողվէր։

3. Առաջին մարզպան եղաւ Վեհմիհրշապուհ անուն պարսիկ իշխանը։

4. Պարսից Յազկերտ Բ. թագաւորը միտքը դրաւ՝ որ Հայոց Քրիստոնէութիւնը ջնջէ, և զամէնքն ալ կրակապաշտ և արևապաշտ ընէ, որովհետև պարսիկներն ալ կրակը և արևը աստուծոյ տեղ կը պաշտէին։

5. Յազկերտ իր չար նպատակին հասնելու համար՝ Հայոց նախարարներէն Վասակ Սիւնի նախարարին շատ պատիւներ տուաւ, և Վեհմիհրշապուհի մեռնելէն ետքը՝ ղինքը Հայոց վրայ Մարզպան դրաւ։

ՎԱՍԱԿ ՍԻՒՆԻ

448-452

6. Վասակ Սիւնի՝ մարզպան ըլլալէն ետքը՝ սկսաւ աշխատիլ որ բոլոր Հայերը կրակապաշտ ընէ և պարսից թագաւորին աչքը մտնելով Հայոց թագաւոր պսակուի։

7. Այս ժամանակ՝ Հայաստանի մէջ Երևելի եղաւ՝ մեծն Վարդան Մամիկոնեան նախարարը. ասիկայ բոլոր Հայերուն առաջնորդ եղաւ որ Քրիստոնէութիւնը չը թողուն։

8. Յաղկերտ՝ Հայոց նախարարները պարսկաստան կանչեց ու բանտարկեց, որպէս զի հաւատքնին ուրանան. նախարարները առ երեսս Յաղկերտի կամքը կատարեցին. բայց երբ Հայաստան դարձան՝ Յովսէփ կաթուղիկոսին ու Ղեւոնդ երէցին առջև ղղջացին։

9. Յաղկերտ երբոր Հայոց դէմ դնելը տեսաւ, բարկանալով շատ զօրք ղրկեց Հայաստան. այս զօրքերը միացան Վասակին և ուրիշ մէկքանի ուրացող նախարարներու հետ, ու պատրաստ եղան՝ որ պատերազմին ու բռնութեամբ Քրիստոնէութիւնը ջնջեն։

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց

Պ Ա Տ Ե Ր Ա Զ Մ Ը

451

10. Մեծն Վարդան Հայաստանի՝ ամեն կողմը լուր ղրկեց՝ որ ուզողը գայ իրեն հետ պատերազմի պարսից դէմ. շատ մը վախուն և վեց հազար կորիւճ Հայեր եկան Վարդանայ քով՝ որպէս զի

Քրիստոնէութեան և Հայրենեաց համար կռուին։

11. Վարդան՝ իր բանակը Տաւարշան բուսած դաշտը տարաւ, այս դաշտին մէջէն Տղմուտ անունով գետ մը կ'անցնի. Վասակ՝ Պարսից և ուրացող Հայոց զօրքովը հոն եկաւ. ու երկու կողմնալ պատերազմելու պատրաստուեցան։

12. Շատ մը անձնուէր քահանայներ և եպիսկոպոսներ ալ կային Հայոց մեծ բանակին մէջ. ասոնք կռիւէն օր մ'առաջ բոլոր Հայերը խոստովանցուցին ու հաղորդեցին. Ղեւոնդ երէց քարոզ մը տուաւ. ու Վարդան ալ ճառ մը խօսեցաւ, և զօրքերը սիրտ առին։

13. Առաւօտ էր՝ երբ պատերազմը սկսաւ. Հայք և Պարսիկք մեծ կատաղութեամբ մէկ մէկու խառնուեցան ու մէկզմէկ ջարդեցին. Տղմուտ գետին ջուրը արիւնով ներկուեցաւ, Պարսիկք ակարացան և սկսան ետ քաշուիլ։

14. Այս կռիւին սաստիկ ժամանակը՝ Ս. Վարդան մեծամեծ քաջութիւններ ընելէ ետք՝ զարնուեցաւ ու մեռաւ, այն

տեն Հայերը շփոթեցան և օրն իրիկուն ըլլալուն՝ ազին անդին ցրուեցան։

15. Վասակ՝ Հայաստանի շատ մը կողմերը պատեցաւ, սոսկալի չարիք գործեց, շատ մարդ սպաննեց, ամէն բան այրեց, ջնջեց, բայց չըկրցաւ Հայոց մէջէն քրիստոնէութիւնը ջնջել, և խայտառակուեցաւ։

16. Վարդանանց մեծ պատերազմին մէջ 1036 Հայ, և 3544 Պարսիկ մեռան։

17. Վասակ՝ յանցաւոր եղաւ Պարսից թագաւորին առջև, և բանտը դրուեցաւ, ու հոն օրդնատեցաւ և մեռաւ։

Ամեն Հայ Վարդանը կը սիրէ և կ'օրհնէ, իսկ Վասակը կ'ատէ և կը նզովէ։

ՄԵԾՆ ՎԱՀԱՆ

485-510

18. Վասակէն ետքը եկող Պարսիկ Մարզպանները՝ շատ անգամ չարչարանք տուին Հայոց, շատ մարդիկ սպաննեցին, Եկեղեցիներ կործանեցին, բայց չըկրցան Հայոց հաստատամտութիւնը խախտել։

19. Մեծն Վահան Մամիկոնեան իշխանը՝ Վարդանայ եղբօրը տղան էր. ասիկայ տեսնելով որ Պարսիկները չարաչար նեղութիւն կուտան Հայոց՝ քովը 3-400 հոգի ժողովեց և սկսաւ Պարսից դէմ պատերազմիլ։

20. Վահան զարմանալի քաջութիւններ ըրաւ պարսից դէմ. անգամ մը 30 հոգիով 3-4000 Պարսիկներու մէջ մնաւ, և դիշեր ատեն քանի մը հարիւր հոգի ջարդեց և մնացածներն ալ փախցուց։

21. Պարսիկք սոսկացին Վահանէն, և իրենց թագաւորն ալ ուզեց որ Վահանին հետ հաշտուի. Վահան պայման դրաւ՝ որ Պարսիկները կրօնքի կամ ուրիշ բանի համար Հայոց նեղութիւն չը տան։

22. Վահան՝ Պարսից թագաւորին կողմանէ Հայոց մարզպան եղաւ, շատ ծաղկեցուց Հայաստանը, օտար թշնամիները վռնտեց, և 26 տարիէն մեռաւ։

Ա. ՅԼ ԵՒ Ա. ՅԼ

ՄԱՐԶՊԱՆՔ 510-693

23. Վահանէն ետքը՝ Հայաստան դարձեալ թշուառութեան մէջ ինկաւ մին-

չև 180 տարի. Պարսից թագաւորները զանազան նեղութիւններով Հայերը չարչարեցին. միայն երբեմն քաջ և Հայրենասէր նախարարներ՝ բարի ծառայութիւններ ըրին ազգին։

24. Այս Հայրենանուէր նախարարներէն մէկն եղաւ՝ Մժէժ Գնունի իշխանը, 30 տարի մարզպանութիւն ըրաւ և Հայաստանի թշնամիները վռնտեց։

25. Մովսէս կաթողիկոսը՝ Քրիստոսէ 551 տարի առաջ՝ Հայոց տոմարը շինեց և այն ատենէն սկսաւ Ազգային թուականը։

26. Վարդան Բ. Մամիկոնեան նախարարը՝ Յունաց կայսեր օգնութեամբը՝ մեծամեծ պատերազմներ ըրաւ Պարսից Խոսրով թագաւորին դէմ, և երևելի եղաւ։

27. Գայլ Վահան Մամիկոնեան նախարարը՝ զարմանալի վարպետութեամբ՝ Պարսից տասն հազար զօրքերը ջարդեց, և Հայաստանի մէկ մասն անոնց ձեռքէն ազատեց. 602։

28. Պարսից կողմանէ դրուած ամէնէն վերջին մարզպան եղաւ Վարազտիրոց անուն Հայ իշխան մը՝ որ 8 տարի նստաւ. ասոր իշխանութեան վերջին տարիները Հայաստան նոր թշնամի մ՚ալ ունեցաւ։

29. Մուհամմէտ անուն ուղտապան մը՝ Աբրահոյ կռապաշտ ժողովրդեան մէջ նոր կրօնք մը քարոզեց, և շատ մարդիկ իրեն հետևելով Մահմետական կոչուեցան։

30. Այս Մահմետականները՝ Հագարացի ըսուած Ազգն էին. քիչ ատենէն խիստ զօրաւոր ժողովուրդ մը եղան և Պարսից թագաւորութիւնը կործանելով՝ բոլոր Պարսիկները Մահմետական ըրին։

31. Այն ժամանակ՝ Յունաց Կայսերը սկսան իրենց կողմանէ վերակացու դնել Հայաստանի վրայ. այս վերակացուները Կուրապաղատ կը կոչուէին։

32. Հագարացիք ահագին բազմութեամբ Հայաստան յարձակեցան և խիստ շատ չարիք գործեցին, բնաւոր մարդիկ սպաննեցին և երիտասարդներն ու աղջիկները բռնութեամբ տաճկացնել ուզեցին։

33. Հագարացիք՝ սոսկալի ու երկարատև պատերազմներ ըրին Յունաց դէմ, և վերջապէս բոլորովին վռնտեցին զանոնք

Հայաստանէն, ու իրենք տիրեցին Քրիս-
տոսէ 693 տարի առաջը։

——

Բ.

ՈՍՏԻԿԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

34. Հադարացիք Հայաստանի տիրե-
ցին և սկսան իրենց կողմանէ վերակացու
դնել Հայոց վրայ. այս վերակացուները
տուրք կը ժողվէին, դատ կը տեսնէին, և
պէտք եղած ատեն՝ օտարաց հետ կը պա-
տերազմէին։

Այս վերակացուները Ոստիկան կը-
կոչուէին։

ԱԲԴԼԼԱ

694-704

35. Առաջին Հադարացի ոստիկանն
եղաւ Աբդլա. ասիկայ չար մարդ մ'էր,
և չարաչար նեղեց Հայերը՝ որպէսզի Քրիս-
տոնէութիւնը թողուն՝ և մահմետական
ըլլան։

ԿՈՇՄ 704-717

36. Աբդլայի յաջորդեց սոսկալի գէշ
մարդ մը՝ որուն անունն էր Կոշմ. ասիկայ
Հայոց բոլոր նախարարները խաբէութեամբ
կանչեց, Նախիջևան քաղաքին եկեղեցիին
մէջ փակեց և այրեց։

47. Կոշմէն ետքը՝ 13 ոստիկան և
քանի մը պատրիկ կոչուած Հայոց իշխան-
ներ՝ կառավարեցին Հայերը 150 տարիի
չափ։ Այս ոստիկաններէն ոմանք խաղա-
ղութեամբ՝ ոմանք ալ սոսկալի անգթու-
թեամբ վարուեցան Հայոց հետ։

38. Զարագործ ոստիկաններէն Ա-
պուսէթ անուն մէկը չափազանց բռնութիւն
բանեցնելուն համար Հայերը զինքը զարկին
սպաննեցին։

39. Հադարացւոց մեծը՝ որ ամիրա-
պետ կը կոչուէր, շատ ղօրքով Բուղա ա-
նուն ոստիկանը Հայաստան զրկեց, որպէս
զի Ապուսէթի մահուան վրէժն առնու։

ԲՈՒՂԱ 850-855

40. Բուղա՝ անողորմ վագրի նման
Հայ ազգաց յարձակեցաւ և անհամար աղջիկ,

կին, տղայ, երիտասարդ ու ծեր ջարդեց, շատերն ալ տաճկաց, և անհնարին աղէտ ու ապականութիւն գործեց մեր խեղճ Հայրենեաց մէջ։

41. Բուղայի անգթութենէն ազատելու համար՝ Սմբատ Բագրատունի իշխանը միացաւ Բուղայի հետ, և շատ նախարարներ անոր ձեռքը մատնեց. ասանկով Սմբատ կը յուսար՝ որ Բուղայի աչքը կը մնանէ, և իրեն չարիք մը չ'ըլլար։

43. Բուղա՝ Հայաստանը արիւնալուայ ընելէն ետքը բիւրաւոր մարդիկ՝ Սմբատն ալ մեկտեղ գերի ընելով՝ շղթայի զարկաւ և հետը Պագրատ քաղաքը Ամիրապետին տարաւ։

43. Ամիրապետը գերիներուն հրամայեց՝ որ հաւատքնին ուրանան. ոմանք վախնալով մահմեդական եղան, ոմանք ալ նահատակեցան. Սմբատ բանտը դրուեցաւ։ և ըրած չարութեանց վրայ զղջալով մեռաւ ու Սմբատ խոստովանող կոչուեցաւ։

ՄԱՍՆ Դ.

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

1. Բագրատունեաց Իշխանութիւնը դլխաւոր ժամանակներու չը բաժնուիր, վասն զի սկիզբէն մինչև վերջը՝ Բագրատունեաց բոլոր թագաւորները ուրիշ տէրութեանց հարկատու էին, և երեւելի փոփոխութիւն մը չը կրեցին։

Ա. ՇՈՏ Ա.

884-889

2. Բագրատունեաց թագաւորութիւնը՝ Աշոտ անունով Բագրատունի իշխանէն սկսաւ. ասիկայ Սմբատ խոստովանողին որդին էր. թագաւոր չ'եղած՝ Հայաստանի իշխան եղաւ և Հայոց խեղճութիւնները թեթևցուց,

3. Աշոտ՝ Հայաստանի թշնամիները վանեցաւ. նախարարները իրեն հետ միա-

ցուց. անոնք ալ Աշոտին լաւութիւնը տեսնելով՝ Սմբատին հրամանաւը դինքը թագաւոր դրին Հայոց վրայ։

4. Աշոտ՝ երկանիկ թագաւորութիւն մը վարեց. հայաստանը խաղաղեցուց. եւ դիքը Պոլիս գնաց և Յունաց կայսրէն մեծ պատիւ առաւ. վերջը հայաստան դառնալու ատեն՝ մեռաւ հինգ տարի թագաւորելէ ետքը։

ՍՄԲԱՏ Ա.

889-904

5. Աշոտին մեռնելէն ետքը՝ տեղը թագաւորեց իր որդին Սմբատ Ա. ամիկայ արի և բարեսիրտ թագաւոր մ'էր, և կ'ուզէր խաղաղութեամբ հայաստանը կառավարել. բայց իր հօրեղբայրը դէմը պատերազմի ելաւ և ուզեց որ ինքը թագաւորէ։

6. Սմբատ քանի մ'անգամ յաղթեց Աբասին, բայց հանգիստ չ'եղաւ. Մինչեւ ետքը ըսուած երկրին Սփշին անունով ոստիկանը երեք չորս անգամ Սմբատայ դէմ պատերազմի ելաւ ու յաղթուեցաւ։

7. Սփշինի մեռնելէն ետքը՝ անոր Յուսուփ եղբայրը Սմբատայ վրայ վազեց. Սմբատ թէպէտեւ դիմացաւ, բայց երբոր նախարարները իրմէ զատուեցան յաղթուեցաւ և հաշտութիւն ըրաւ Յուսուփին հետ։

8. Յուսուփ՝ հայերը տկարացնել ուզեց. ասոր համար Պագիկ Արծրունի իշխանը՝ Վասպուրական երկրին վրայ թագաւոր դրաւ. Պագիկ ալ Յուսուփին հետ միանալով՝ սկսաւ Սմբատայ դեմ պատերազմիլ։

9. Սմբատ թագաւորը ամեն կողմանէ նեղուեցաւ, վասն զի հայոց ազատ և անմիտ նախարարներն ալ՝ պզտիկ պատճառաւ մը հետը թշնամի եղան և ուզեցին զինքը սպաննել, բայց խայտառակուեցան, և Սմբատ անոնց շատերուն աչքը փորել տուաւ։

10. Սմբատ երբոր տեսաւ՝ որ Յուսուփ զինքը բռնել կ'ուզէ, քիչ մը զօրքով Կապոյտ ըսուած բերդը քաշուեցաւ. Յուսուփ եկաւ բերդը պաշարեց՝ առաւ, և Սմբատն ալ բռնեց։

12. Սմբատ՝ տարի մը հանգիստ ապրելէն ետքը՝ Յուսուփ զինքը բռնեց և ըս-

տիպեց՝ որ հաւատքը ուրանայ նախ. բան-
տի մը մէջ դրաւ. հաւքը սկսաւ չարչարել.
վերջապէս՝ հայոց զօրքերուն դիմացը խա-
չի վրայ գամեց խեղճ թագաւորը. հաւքն
մոռթեալ տուաւ։

Ա. ՇՈՏ Բ. ԵՐԿԱԹ

914-928

13. Աշոտ Երկաթ՝ իր Սմբատ հօրը
մեռնելէն հաւքը՝ զօրք ժողվեց. Հայաս-
տանի թշնամիները վռնտեց, և Հայոց թա-
գաւոր եղաւ։

14. Յուսուփ՝ շատ զօրքով Աշոտին
վրայ եկաւ և սկսաւ Հայաստանի մէջ ամեն
տեսակ գերութիւններ ընել. հայոց տղէս
և փառասէր նախարարներն ալ անհոգ
կեցան։

15. Աշոտ մինակ Ճալուն՝ չը կրցաւ
Յուսուփին դէմ պատերազմիլ. ասոր հա-
մար Հայաստան եօթն տարի մեծ խեղճու-
թեան մէջ էր։

16. Երբոր Յուսուփ Հայաստանը կ'ա-
պականէր, հայոց նախարարներն ալ մէկ-

մէկուդէմ կռուիլ սկսան. ուստի շատ
մարդ ջարդուեցաւ, և երկրագործութիւնը
դադրելուն՝ սաստիկ սով եղաւ։

17. Այս սովին ժամանակը՝ շատ մար-
դիկ անօթութենէ մէկզմէկ մեռուցին և
միսն եփելով կերան. շատ մայրեր ալ ի-
րենց զաւակները մորթեցին ու կերան։

18. Աշոտ Երկաթին առենը՝ հայոց
կաթողիկոսն էր Յովհաննէս անունով ազ-
գասէր հայրապետը. ասիկայ՝ Յունաց կայ-
սեր նամակ մը ղրկեց և անկէ օգնական
զօրք ուղեց Աշոտին համար։

19. Աշոտ Կ. պոլիս գնաց. և շատ
մը Յոյն զօրք առնելով՝ Հայաստան ե-
կաւ. Յուսուփը վռնտեց, և Հայոց նա-
խարարները իրեն հնազանդեցուց։

20. Աշոտին հօրեղբօրը որդին՝ Աշոտ
բռնաւոր անուն իշխանը՝ Յուսուփին ձեռ-
քովը թագաւոր եղաւ և սկսաւ Աշոտ Եր-
կաթին դէմ կռուիլ, և Հայաստան նորէն
տակն ու վրայ եղաւ։

21. Աշոտ՝ այսպէս թշնամիներէ պա-
շարուելով՝ ուզեց որ իր անձը ազատէ.
100 քաջ մարդեր ժողվեց և Գեղամայ

ծովուն մէջ Սևան ըսուած կղզին գնաց.

22. Յուսուփին իշխաններէն Պէշիր անունով մէկը՝ շատ զօրքով Աշոտին դէմ գնաց. Աշոտ քիչ մը մարդով Գեղամայ ծովուն վրայ պատերազմեցաւ, և յաղթեց ու փախցուց իր թշնամիները։

23. Աշոտ Պէշիրը վռնտելէ ետքը՝ Հայաստանը խաղաղեցուց. և քիչ ատենէն մեռաւ. չափէ դուրս քաջութեանը համար՝ Աշոտ երկաթ կը կոչէին զինքը։

ԱՐԱՍ
ԵՒ
ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ
928-977

24. Աշոտ երկաթին յաջորդեց իր Արաս եղբայրը. ասիկայ շատ զօրք ժողվեց, Հայաստանի բոլոր թշնամիները վռնտեց և նախարարները զսպեց.

25. Արաս խելացի կերպով թագաւորեց 24 տարի և մեռաւ. Արասի Աշոտ որդին 90000 զօրք ժողվելով Հայոց թշնամիները սարսափեցուց, և ինն տարիէն թագաւոր եղաւ։

26. Աշոտին պզտիկ եղբայրը՝ Մուշեղ՝ Կարս քաղաքին մէջ ինքզինքը թագաւոր պսակեց. Աշոտ չուզելով որ պատերազմ ըլլայ, խաղաղութիւն ըրաւ հետը. Մուշեղին այս հաստատած թագաւորութիւնն ալ թագաւորութիւն Կարսոց ըսուեցաւ։

27. Աշոտ՝ ազգատները շատ կը սիրէր. իր բոլոր ունեցածը անոնց կուտար և անոնց հետ կը ճաշէր, ասոր համար Աշոտ ողորմած ըսուեցաւ։

28. Աշոտ 26 տարի ապրելով երջանիկ ըրաւ Հայերը և այնպէս մեռաւ։ Իրեն յաջորդեց իր որդին Ամբատ Բ.

ԱՄԲԱՏ Բ.
ԵՒ
ԳԱԳԻԿ Ա. 977-1020

29. Ամբատ Բ. Հայոց թագաւոր եղաւ իր հօրը տեղ, և իմաստութեամբ կառավարեց Հայաստանը. Անի անունով

քաղաքը նորոգեց. և չորս կողմը պարիսպ քաշեց. հազարի չափ ալ եկեղեցի շինեց։

30. Սմբատ՝ 13 տարի թագաւորելէն ետքը՝ մեռաւ. իրեն յաջորդեց Գագիկ Ա. որդին. ասիկայ հզօր և խնամտուն թագաւոր մը եղաւ. 30 տարի խաղաղութեամբ Հայաստանը կառավարեց ու մեռաւ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՄԲԱՏ

1020-1040

31. Յովհաննէս Սմբատ Գագիկի որդին՝ իր հօրը յաջորդեց. ասիկայ տկար և թոյլ թագաւոր մ'եղաւ. թշնամիք ալ եկան շատ չարիք ըրին Հայոց։

32. Յովհաննէսին Աշոտ եղբայրը կրակոս երիտասարդ մ'էր. ուզեց որ ինքը թագաւոր ըլլայ. զօրք ժողվեց՝ Հայաստանը տակն ի վրայ ըրաւ, բայց չյաջողեցաւ։

33. Յովհաննէսին ժամանակը՝ Սկիւթացի Թաթար ըսուած ազգը՝ ահագին բազմութեամբ Հայաստան եկաւ. ասոնց իշխանին անունն էր Տուղրիլ պէկ։

34. Տուղրիլ՝ եօթն տարի Հայաստանը աւերեց. մեծամեծ քաղաքներ կործանեց. քանի մը հարիւր հազար մարդ ջարդեց և անհամար գերիներ առաւ. շատ մարդ ալ բռնութեամբ Մահմետական ըրաւ։

35. Տուղրիլ՝ մեծ բանակով մը Մանազկերտ ըսուած ամուր քաղաքին վրայ գնաց. քաղաքացիք միացան և դէմ դրին. մեծամեծ քաջութիւններով թաթարները վախցուցին. Գագիացի վարպետ մ'ալ Տուղրիլի մեքենաները այրեց. Տուղրիլ ամօթով ետ քաշուեցաւ։

36. Թաթարներէն զատ՝ Յոյներն ալ Հայաստան որշաւեցին. Յովհաննէս թագաւորը տկար ըլլալուն, Վասիլ կայսեր թուղթ տուաւ՝ որ իր մեռնելէն ետքը Անի քաղաքը Յունաց անցնի։

37. Կայսրը այս թուղթը առնելով ուրախացաւ. և շատ զօրք ղրկեց Յովհաննէսին՝ որպէս զի թաթարները վռնտէ։

38. Կոստանդին Կայսրը՝ մեռնելու ատեն Կիրակոս անունով Հայ քահանայ մը

կանչեց, և Յովհաննէսին՝ Անիի համար Վասիլ Կայսեր տուած թուղթը անոր յանձնեց. ու ըսաւ, "տար այս թուղթը քու թագաւորիդ տուր"։

31. Կիրակոս քահանան՝ սոսկալի անօրէնութիւնով թուղթը քովը պահեց. և երբոր Միքայէլ անուն մէկը Յունաց Կայսր եղաւ՝ տարաւ անոր տուաւ և փոխարէն շատ ստակ առաւ։

40. Այս անարժան մատնիչը՝ Յուդայի նման իր հայրենիքը մատնեց. և Հայաստանի մինչև հիմայ կրած թշուառութեանց պատճառ եղաւ։

41. Յովհաննէս Սմբատ՝ քսան տարի թագաւորութիւն ընելէն ետքը մեռաւ, և տեղը թագաւոր եղաւ իր եղբօրը որդին Գագիկ Բ. որ տասն և վեց տարեկան խելացի ու քաջ երիտասարդ մ'էր։

ԳԱԳԻԿ Բ.

1040-1045

42. Գագիկ Բ. իր Յովհաննէս հօրեղբօրը տեղ յաջորդելով ուզեց որ Հայաստանի թշնամիները վռնտէ. 16000 զօրք ժողվեց. թաթարաց դէմ պատերազմեցաւ և հալածեց զանոնք։

43. Գագիկին ժամանակը՝ Վեստ Սարգիս անունով Հայ իշխան մը կար Հայաստանի մէջ. ասիկայ սկսաւ աշխատիլ՝ որ Գագիկին տեղ ինք թագաւոր ըլլայ։

44. Վեստ Սարգիս՝ Յունաց Կայսեր խօսք տուաւ որ Անի քաղաքը իրեն տայ. Գագիկ դէմ կեցաւ. այս պատճառաւ Կայսրը շատ զօրք ղրկեց Հայոց վրայ. բայց Գագիկ վռնտեց զանոնք։

45. Վեստ Սարգիս՝ Հայոց նախարարներէն շատերը, և Պետրոս Կաթողիկոսը իրեն հետ միացուց, և ինքը ըրաւ՝ որ Գագիկը թագաւորութենէ ձգէ. այս պատճառաւ՝ խորհուրդ տուաւ Յունաց Կայսեր՝ որ Գագիկը Կ. Պոլիս կանչէ և հոն վար դնէ։

46. Յունաց Կայսրը՝ նամակ ղրկեց և Գագիկը Կ. Պոլիս հրաւիրեց տեսութեան համար. և երդում ալ կ'ընէր՝ որ դէշութիւն մը չընէր, այլ թող կուտայ որ նորէն Անի դառնայ։

47. Գագիկ իմացաւ՝ որ Կայսրը կուզէ

իրեն խարդախութիւն ընել. ուստի չ'ուզեց Կ. Պոլիս երթալ։

48. Վեստ Սարգիս և Պետրոս Կաթուղիկոս՝ Գագիկին առջև Ս. հաղորդութեան վրայ երդում ըրին և ըսին երեն որ «մենք Անի քաղաքը ուրիշի չենք յանձներ՝ մինչև որ դու ետ դառնաս»։

49. Գագիկ՝ առանց ուզելու՝ Կ. Պոլիս գնաց. Կայսրը քանի մը օր մեծ պատիւներ ըրաւ, բայց ետքը բանտարկեց զինքը և բռնութեամբ Անի քաղաքը ուզեց։

50. Գագիկ հայրենասէր թագաւորը՝ ամեն կերպով դէմ կեցաւ և կայսեր ըսաւ որ, «Անի քաղաքը իմս չէ, այլ Հայոց ազգինն է, և ես բան մը չունիմ որ քեզի տամ»։

51. Պետրոս կաթողիկոս՝ կայսրէն շատ ստակ առնելով՝ Անի քաղաքին 40 բանտիները Կ. Պոլիս ղրկեց. խեղճ Գագիկ թագաւորը զարհուրեցաւ այս սոսկալի վատութեան վրայ։

52. Կայսրը՝ զԳագիկ թագաւորութենէ ձգեց, և միայն քանի մը պզտիկ քաղաքներ տուաւ անոր. Գագիկ կատաղութեամբ շատ Յոյներ սպաննեց. Յոյները ալ զինքը բռնեցին ու սպաննեցին։

52. Գագիկ հինգ տարի թագաւորելէն ետքը՝ երեսուն և չորս տարի ալ ապրեցաւ և այնպէս մեռաւ։

Բագրատունեաց թագաւորութիւնը այս կերպով կործանեցաւ Քրիստոսէ 1045 տարի ետքը։

ԳԻՏԵԼԻՔ Ա.

ԱՆԻ ՔԱՂԱՔ

977-1320

54. Անի՝ առաջուց պզտիկ քաղաք մ'էր. Բագրատունեաց Սմբատ Բ. թագաւորը՝ Քրիստոսէ 977 տարի ետքը՝ շատ շէնքերով զարդարեց և չորս կողմը լայն ու ամուր պարիսպ մը քաշեց։

55. Անիի մէջ ութ կամ ինն հարիւր հազար բնակիչ կային և շատը խիստ հարուստ մարդիկ էին։

56. Բագրատունեաց թագաւորութեան կործանելէն ետքը՝ Յոյները քանի մը անգամ Հայաստան եկան. շատ չարիք գործեցին, և Անի քաղաքը պաշարեցին։

57. Անեցիք միանալով՝ ջարդեցին Յունաց զօրքը, բայց ետքը երբ լսեցին՝ որ Գագիկ թագաւորը ետ պիտի չդառնայ, քաղքին դռները բացին և Յոյները ներս առին։

58. Փիչ ժամանակ ետք՝ Թաթարները և Պարսիկները Անին առին և շատ մարդիկ ջարդեցին. այս պատճառաւ շատ մարդիկ տուներնին տեղերնին ձգեցին և օտար երկիրները գնացին։

59. Պարսիկներէն և Թաթարներէն ետքը՝ զանազան բռնաւորներ Անի քաղաքին տիրեցին, մինչև Քրիստոսի 1320 թուականը։

60. Քրիստոսի 1320 թուականին՝ Հայաստանի մէջ սոսկալի երկրաշարժ մը եղաւ, և Անի քաղաքը կործանեցաւ, մէջի բոլոր բնակիչներն ալ ցրուեցան և կըսուի թէ մէկմասը գնաց Ակն քաղաքը չմնաց ուր հոն բնակեցաւ։

61. Անի քաղքին աւերակները մինչև հիմայ կ'երևան. շատ ճամբորդներ հոն կ'երթան պատելու, և կ'ըսեն՝ թէ տակաւին մէկ եկեղեցի մը և ուրիշ քանի մը շէնքեր կանգուն մնացած են։

ԳԻՏԵԼԻՔ Բ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

62. Բագրատունեաց Սմբատ Ա. թագաւորին ժամանակը՝ քրիստոսէ 908 տարի ետք՝ Արծրունի ըսուած Հայ ցեղին նախարարը Յուսուփէն թագաւոր պսակուեցաւ՝ Հայաստանի Վասպուրական նահանգին վրայ։

Այս թագաւորութիւնը կոչուեցաւ՝ Արծրունեաց թագաւորութիւն։

63. Արծրունեաց թագաւորութիւնը դիմացաւ՝ մինչև Քրիստոսի 1021 թուա-

կանը, այսինքն 113 տարի. ամենէն վերջին թագաւորը եղաւ Սինեքերիմ։

64. Սինեքերիմի ժամանակը՝ թաթարները Վասպուրական արշաւեցին. Սենեքերիմ տկար ըլլալով՝ Յունաց կայսրէն խնդրեց որ Վասպուրական նահանգը Յունաց թողու՝ և փոխարէն՝ Սեբաստիա գաւառն առնէ։

65. Սինեքերիմ Յունաց կայսեր հաճութեամբը՝ հեռը չորս հարիւր հազար հոդի առաւ և Սեբաստիա գնաց. առանկով վերջացաւ Արծրունեաց թագաւորութիւնը։

ԳԻՏԵԼԻՔ Գ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՐՈՒՑ

66. Բագրատունեաց Աշոտ Գ. ողջունած կոչուած թագաւորին ժամանակը՝ Քրիստոսէ 961 տարի եռքը՝ Մուշեղ իշխանը Կարս քաղաքին մէջ ինքզինքը թա-

գաւոր պսակեց. և կոչուեցաւ թագաւոր Կարուց։

67. Կարուց ամենէն եռքի թագաւորն եղաւ՝ Գագիկ անուն մէկը. ասիկայ Գարսիոյ Սլթանէն թագաւորէն վախնալով՝ իր երկիրը Յունաց կայսեր տուաւ. և ինք գնաց պզտիկ բերդի մը մէջ բնակեցաւ։

68. Կարուց թագաւորութիւնը՝ 93 տարի տևեց. և Բագրատունեաց իշխանութենէն քիչ մը եռքը կործանեցաւ. ուստի Քրիստոսի 1065 թուականին՝ բոլոր Հայաստան օտար թշնամիներու ձեռք մնաց։

69. Այս թշնամիները մեծամեծ աւերումներ գործեցին. անհամար մարդ ջարդեցին. շատ քաղաքներ կործանեցին. Մանակերտ ըսուած քաղաքն ալ ուզեցին առնել, բայց Գաղղիացի մարդ մը անոնց մեքենայները այրեց և զիրենք խայտառակեց։

70. Բիւրաւոր Հայ թշուառ ընտանիք՝ իրենց անձը ապրեցնելու համար՝ ունեցածնին թողուցին և հայրենի երկրէն եկան օտար երկիրներ դաղթեցին։

Հայոց առաջին դաղթած երկիրներն եղան Կիլիկիա, Խրիմ, Լեհաստան և Մոլտավիա։

ՄԱՄՆ Ե.

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

1. Ռուբինեանց իշխանութիւնը՝ երեք դլխաւոր ժամանակներու կը բաժնուի. որք են։

Առաջին, Իշխանապետութիւն Ռուբինեանց

Երկրորդ, Թագաւորութիւն Ռուբինեանց

Երրորդ, Թագաւորք Լատինք։

Ա.

ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

2. Բագրատունեաց Գագիկ Բ. Թագաւորին մեռնելէն երեսուն տարի առաջ՝ Ռուբէն անունով Հայ իշխան մը երևան ելաւ. այս Ռուբէնը՝ նոյն Գագիկ Թագաւորին ազգականն էր։

3. Յոյները Հայոց չարաչար վնասներ կը հասցնէին. և Հայոց ազգը ջնջել կ'ուզէին. Ռուբէն խորհեցաւ՝ որ Յոյներէն վրէժ առնու. և իշխանութիւն մը հաստատէ։

4. Ռուբէն քանի մը հարիւր քաջ Հայեր ժողվեց. Կիլիկիոյ մէջ Տօրոս ըսուած բարձր և ամուր լեռան վրայ ելաւ, և հոն շատ մը հայեր գտնելով՝ անոնց իշխան եղաւ, Քրիստոսի 1080 թուականին։

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա.

1095-1100

5. Ռուբէնին յաջորդեց իր քաջ և իմաստուն որդին՝ Կոստանդին. ասիկայ հինգ տարի իշխանապետութիւն ըրաւ. Յունաց հետ շատ պատերազմներ ըրաւ. յաղթեց անոնց, և քաղաքներու ու բերդերու տիրեց։

6. Եւրոպայի իշխանները՝ շատ զօրքով Ասիա եկան, և կուզէին Երուսաղէմի տիրել. Կոստանդին մեծ օգնութիւններ ըրաւ անոնց. ուտելիք և պգեստ ղրրկեց. ան իշխաններն ալ Կոստանդինի պատիւ մը ընելու համար՝ ԿԱՄՍ կոչեցին զինքը։

ԹՈՐՈՍ Ա.

1100-1123

7. Կոստանդինին յաջորդեց իր Թորոս որդին. ասիկայ հօրը նման քաջ և իմաստուն իշխան մ'եղաւ. մեծ պատերազմներ ըրաւ Յունաց և ուրիշ ազգերու դէմ. չարաչար յաղթեց անոնց և բոլոր Կիլիկիա ըսուած ընդարձակ երկիրը նուաճեց։

8. Թորոս՝ Գագիկ թագաւորն սպանող Յոյները բռնեց և անոնց երկրին տիրեց. 23 տարի փառաւոր իշխանութիւն վարելէն ետքը մեռաւ։

ԼԵՒՈՆ Ա.

1123-1141

9. Թորոս Ա.ին յաջորդեց իր որդին Լեւոն Ա. ասիկայ Եւրոպայի թագաւորներուն քով շատ անուանի եղաւ՝ իր քաջութեանն և իմաստութեանն համար. Յունաց դէմ պատերազմներ ըրաւ և անոնց երեւելի քաղաքներուն տիրեց։

10. Յունաց Կայսրը՝ անհամար զօրքով Լևոնին վրայ եկաւ, յաղթեց և բռնեց զինքն ու Կոստանդնուպոլիս տանելով՝ բանտը դրաւ իր զաւակաց հետ. Լևոն չորս տարի կեցաւ բանտին մէջ ու մեռաւ։

11. Լևոնին ժամանակը՝ Յոյները կ'ուզէին Հայոց Սնարզաբա ըսուած քաղաքը առնել. քաղաքին բնակիչները այր՝ կին՝ տղայ՝ աղջիկ՝ ամենքն ալ կատաղութեամբ պատերազմեցան Յունաց դէմ և անոնց զօրքերը ջարդեցին։

12. Սնարզաբայի երիկ մարդերը՝ Հայրենասէր Տիաններ, և կնիկ մարդիկ ալ Սքանչելի Դիւցազնուհիներ էին։

ԹՈՐՈՍ Բ.

1144-1168

13. Լևոն Ս. ի մեռնելէն երեք տարի ետքը՝ իր Թորոս որդին բանտէն փախաւ. Կիլիկիա եկաւ. Հայոց քաջերը ժողվեց. Յոյները վռնտեց. բոլոր Կիլիկիայի տիրեց և հօրը իշխանութիւնը վերահաստատեց։

14. Թորոս՝ իրմէ առջի եղող իշխան-

ներէն շատ աւելի զօրաւոր եղաւ. Յունաց Կայսրը մեծ բանակաւ իր վրայ եկեր էր. Թորոս՝ Հայոց քաջ զօրքերովը սաստիկ պատերազմեցաւ անոր դէմ, չարաչար յաղթեց Յոյները՝ և անոնց շատ մը իշխանները գերի բռնեց։

15. Կիլիկիայի սահմանակից քանի մը Տաճիկ Սուլթաններ կային, ասոնք Թորոսին վրայ նախանձելով՝ անոր դէմ պատերազմի ելան, բայց Թորոս յաղթեց անոնց. իր իշխանութիւնը՝ մինչև Միջերկրական ըսուած ծովը հասուց՝ և իր թշնամիներուն սիրտը վախ ձգեց։

16. Յունաց կայսրը՝ երկրորդ անգամ պատերազմի ելաւ Թորոսին դէմ, բայց շուտով հետը հաշտուեցաւ, և ասանկով Կիլիկիոյ երկիրը բոլորովին Հայոց իշխանութեան տակն անցաւ։

ՄԼԷՀ

1168-1174

17. Թորոսին մեռնելէն ետքը՝ իր Մըլէհ անունով եղբայրը՝ այլազգի զօրքով

Կիլիկիա մտաւ, շատ մարդ սպաննեց, գեղեր ու քաղաքներ այրեց. Թորոսին տարզան սպաննեց և բռնութեամբ իշխանապետ եղաւ։

18. Մէջէի ժամանակը շատ մը Եւրոպացի Լատիններ կային Կիլիկիոյ մէջ. ասոնք Պապական էին, այսինքն Հռովմ քաղքին մէջ գտնուող Պապն կը հնազանդէին։

19. Այս Լատիններուն ջանացին՝ որ Հայերը պապական ընեն, և կ'ըսէին թէ պապական չ'եղողը արքայութիւն չըպիտի մտնէ։

20. Մէջէ տեսնելով որ Լատիններուն Հայոց մէջ խռովութիւն կը հանեն, զամէնքն ալ Կիլիկիայէն վռնտեց։

21. Մէջէ քանի մը անղթութիւններ ըրաւ. Հայոց զօրքերը վրան յարձակեցան և գինքը սպաննեցին՝ 3 տարի իշխելէն ետք։

ՌՈՒԲԷՆ Բ.

1174-1185

21. Ռուբէն Բ. Մէջէին եղբօրը տարզան էր և Հայոց իշխանապետ եղաւ. իր

բարութեամբը և իմաստութեամբը՝ Կիլիկիան շատ ծաղկեցուց. և հայերը երջանիկ ըրաւ։

22. Լատին իշխանները՝ խարդախութեամբ Ռուբէնը բռնեցին և բանտարկեցին. այն ատեն Ռուբէնին Լեւոն անունով տղեկ եղբայրը՝ Հայոց քաջերը ժողվեց, գնաց այն իշխանները սարսափեցուց և եղբայրն ազատելով Կիլիկիա բերաւ։

Բ.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ

ԼԵՒՈՆ Բ.

1185-1219

23. Ռուբէնի մեռնելէն ետքը՝ իր եղբայրը Լեւոն Բ. յաջորդեց իրեն. ասոր ժամանակը Կիլիկիա շատ ծաղկեցաւ ու փառաւորեցաւ։

24. Լեւոնին ատենը՝ Գերմանացւոց ազգին կայսրը՝ Ֆրիդրիխ Երեւելի քրիստոնեայ իշխաններ՝ անհամար զօրքով Կիլի-

կիա եկան. և անկէց ալ դացին Երուսաղէմ քաղաքը՝ զանի Մահմետականներուն ձեռքէն առնելու համար, այս քրիստոնեայները Խաչէր կը կոչուէին։

25. Լեւոն Բ. խաչակրաց մեծամեծ օգնութիւններ ըրաւ. գերմանացւոց կայրը ալ խոստացաւ՝ որ զինքը Հայոց վրայ թագաւոր կը պսակէ։

26. Լեւոն Բ. Գերմանացւոց և Յունաց կայսրերուն հաւանութեամբը՝ Հայոց թագաւոր պսակուեցաւ և իրեն աթոռը Սիս քաղաքին մէջ հաստատեց։

27. Հռովմայ Պապը՝ և Լատին իշխանները կը ջանային՝ որ Լեւոնը և բոլոր Հայերը Պապական ընեն, և ամեն կամքերնին կատարեն Կիլիկիոյ մէջ։

29. Լեւոն Բ. Լատին իշխանաց և կրօնաւորաց չար միտքը հասկընալով՝ զամէնքն ալ Կիլիկիայէն վռնտեց. և բոլոր երկիրը խաղաղեցուց։

30. Լեւոն Կիլիկիոյ թշնամիներուն դէմ գատերազմեցաւ և միշտ յաղթութիւններ ըրաւ. 34 տարի Հայերը կա-

ռավարեցին ետքը մեռաւ. ու Սիս քաղաքին մէջ թաղուեցաւ։

ՓԻԼԻՊՊՈՍ ԵՒ ՀԵԹՈՒՄ

1220-1269

31. Լեւոն Բ. միայն տասնեվեց տարեկան Զապէլ անունով աղջիկ մը ունէր. իշխանները միացան և Զապէլը Փիլիպպոս անուն Լատինի մը հետ ամուսնացուցին. Փիլիպպոս թագաւորեց Հայոց վրայ։

32. Փիլիպպոս Հայերը ատեց. նաև ուզեաւ Սիս քաղաքին մէջի հարստութիւնները յափշտակել. Հայերը նեղացան և զինքն սպաննեցին մէկ տարիէն։

33. Զապէլ երկրորդ անգամ ամուսնացաւ Հեթում անուն Հայ իշխանի մը հետ. սակայն աղդասէր և քաջ թագաւոր մ'եղաւ. Կիլիկեան շէնցուց և թշնամիքը հալածեց։

34. Թաթարները Հայոց նեղութիւններ կուտային. Հեթում ելաւ Թաթարքոտան դնաց՝ որ երեք ամսուան ճանապարհ

էր. հոն Թաթարաց Խանը տեսաւ և իր խնդիրքը կատարել տուաւ։

35. Եգիպտոսի Սուլթանը Հեթումի դէմ պատերազմի ելաւ. այս պատերազմին մէջ Հայերը յաղթուեցան, և Հեթումին Լեւոն տղան դերի բռնուեցաւ. Հայոց իշխանները շատ ստակ տուին և Լեւոնն ազատեցին։

36. Հեթում՝ իր ծերութեան ատեն թագաւորութիւնը Լեւոն տղուն թողուց և ինքը Դրազարկ ըսուած վանքը նստաւ ու հոն մեռաւ։

ԼԵՒՈՆ Գ.

1270-1289

37. Լեւոն Գ., իր հօրը Հեթում Ա.ին յաջորդեց. և քաջութեամբ ու իմաստութեամբ Կիլիկիան պայծառացուց. ամեն տեղ դպրոցներ բացաւ ժողովուրդը կըրթելու համար, և օտար ազգերու հետ բարեկամութիւն հաստատեց։

38. Լեւոն Գ.ի ժամանակը Կիլիկիոյ մէջ Լատին իշխանները և կրօնաւորները շատ զօրացած էին. ասոնք կ'ուզէին որ

Կիլիկիոյ թագաւորութիւնը իրենց ձեռքն անցունեն, անոր համար Եգիպտոսի Սուլթանը Լեւոնի դէմ թշնամացուցին։

39. Եգիպտացիք անհամար բազմութեամբ յանկարծ Կիլիկիա արշաւեցին, շատ աւեր և ապականութիւն գործեցին. Լեւոն անպատրաստ ըլլալով՝ չը կրցաւ անոնց դէմ պատերազմիլ։

40. Եգիպտացիք երկրորդ անգամ Կիլիկիա արշաւեցին. Լեւոն ժողվեց Հայոց քաջ զօրքերը և մեծ ջարդ տուաւ անոնց. Լեւոնին այս քաջութիւնը շատ թագաւորներ և իշխաններ լսեցին, և ակնածելով հետը բարեկամ եղան։

41. Լեւոն քսան տարի թագաւորեց ու մեռաւ. Հայերը շատ ցաւեցան իր մահուան վրայ։

ԼԵՒՈՆԻՆ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

1289-1308

42. Լեւոն Գ.ին յաջորդեց իր Հեթում որդին, ասիկայ կրօնաւոր ըլլալուն՝ քիչ ատենէն թագաւորութիւնը Թորոս Գ. եղբօրը թողուց և վանք մը դնաց։

43. Թորոս Գ. երկու տարի թագա-

ւորեց և ինքնին ետ քաշուեցաւ ուստի Հեթում երկրորդ անգամ թագաւոր եղաւ, և Թաթարաց հետ հաշտութիւն ըրաւ։

44. Հեթում և Թորոս անգամ մը Կ. Պոլիս գնացին, որովհետև իրենց քոյրը Յունաց կայսեր հետ ամուսնացած էր. ան առեն Սմբատ եղբայրենին ինքզինքը թագաւոր պսակեց Հայոց վրայ։

45. Հեթում և Թորոս երբոր Կիլիկիա կը դառնային՝ Սմբատ զիրենք բռնեց, Թորոսն սպաննեց և Հեթումն ալ բանտարկեց. բայց իրենց Կոստանդին եղբայրը՝ այս բանիս կատղելով զօրք ժողվեց Սմբատը բռնեց բանտ դրաւ, Հեթումը ազատեց և ինքը թագաւոր եղաւ։

46. Հեթում՝ երրորդ անգամ թագաւոր եղաւ Կոստանդինի տեղ, Կոստանդին նեղացաւ և ուզեց պատերազմի ելլել. Հեթում ալ զինքը բռնեց և Կ. Պոլիս դրկեց։

47. Հեթում՝ քանի մը տարիէն թագաւորութիւնն իր Լեւոն եղբօրորդւոյն յանձնեց և ինքը միայն թագաւորահայր եղաւ։

48. Լեւոն Դ. Լատին իշխանաց և կրօնաւորաց կեղծաւորութենէն խաբուելով ուզեց՝ որ Հայոց եկեղեցական ծէսերը փոփոխէ. այս պատճառաւ շատ խռովութիւններ ելան ժողովրդեան մէջ։

49. Լատինայ իշխաններուն մատնութեամբը՝ Լեւոն և Հեթում 40 ի չափ Հայ նախարարներու հետ՝ Փիլարզու անուն Թաթար զօրապետէն սպաննուեցան։

50 Հեթումին Օշին եղբայրը՝ Հայոց քաջ զօրքերը ժողվեց. Փիլարզուն կիլիկիայէն վռնտեց և ինք թագաւոր եղաւ։

51. Օշին տեսնելով որ Լատինք իրեն ալ թշնամութիւն ընել կ'ուզեն, հաշտուեցաւ անոնց հետ. Լատին իշխանի մը աղջիկ՝ իրեն կին առաւ, և ժողովրդեան բողոքներուն ականջ չդնելով՝ Հայոց եկեղեցական ծէսերուն մէջ Պապական եկեղեցոյն ծէսերը խառնեց։ Նաև Հայոց կրօնաւորները սկսան Պապական կրօնաւորաց զգեստն հագնիլ։

52. Եւրոպայի թագաւորները սկսան Օշինի հետ բարեկամութիւն ընել. և Օշին անոնց օգնութեամբը Եգիպտացւոց դէմ

մեծամեծ յաղթութիւններ ըրաւ։ Օշին 12 տարի թագաւորեց ու մեռաւ։ Օշինի աւանն Անի քաղաքը կործանեցաւ։

ԼԵՒՈՆ Ե.

1320-1241

53. Օշինին 12 տարեկան տղան՝ Լեւոն Ե՝. հօրը տեղը թագաւորեց. բայց ինքը դեռ տղայ ըլլալուն՝ Օշին Պայլ անունով իշխանն ալ խնամակալ եղաւ։

54. Օշին Պայլ՝ ջանք ըրաւ զՀայերը Լատինացնել և թագաւորութիւնը Լատինաց ձեռքն անցունել. ասոր համար Լեւոնին չար կրթութիւն մը տուաւ և Լեւոն եղաւ մոլի և ախտաւոր թագաւոր մը։

55 Եգիպտոսի Սուլթանը՝ շատ զօրքով Կիլիկիա արշաւեց. Լեւոն ակար ըլլալուն՝ Եւրոպացիներէն օգնութիւն ուզեց. անոնք ալ չտուին. ուստի Կիլիկիա շատ խեղճ եղաւ։

56. Երկրորդ անգամ Եգիպտացիք, Թաթարները և Թիւրքերը անհամար բազմութեամբ Կիլիկիա վաղեցին և ամէն տեսակ չարիք գործեցին. Լեւոն անխելքութեամբ կ'ուզէր՝ որ Եւրոպայի թագաւորները իրեն օգնեն, և անդադար նամակ կը գրկէր Պապին։

57. Պապը և Լատինաց իշխանները խօսք տուին՝ որ Հայոց կ'օգնեն, միայն թէ Հայերն իրենց կրօնական աղտոտութիւնը թողուն ու Պապին գլխաւորութիւնն ընդունին և Պապական ըլլան։

58. Լեւոն յանձն առաւ՝ որ ամէն կերպով Պապին պիտի հնազանդի. այն առեն Պապն ալ շատ ոսկի գրկեց, և Լեւոն՝ անով՝ Կիլիկիոյ աւերակները չինել տուաւ. բայց քիչ առենէն՝ Եգիպտացիք նորէն եկան և գրեթէ բոլոր Կիլիկիան աւերեցին ու անհամար մարդ ջարդեցին։

59. Լեւոն իր՝ ախտաւոր՝ մոլի և թոյլ բնաւորութեամբը՝ Հայոց պատուհաս՝ և Լատին իշխանաց խաղալիկ եղաւ. 24 տարի թագաւորեց և մեռաւ։

Գ

ԹԱԳԱՒՈՐՔ ԼԱՏԻՆՔ

ԼԵՒՈՆԻ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ

1341-1365

60. Լատին իշխանները Կիլիկիոյ մէջ շատ զօրացած ըլլալով՝ միաբանեցան, և Լեւոն Ե. ի մեռնելէն ետքը՝ Ճիւան կամ Կոստանդին Գ. անուն Լատին իշխանը՝ Հայոց վրայ թագաւոր դրին։

61. Ճիւան սկսաւ բռնութիւն բանեցընել, և ուզեց որ Հայերը իրենց եկեղեցւոյն ծէսերը փոխեն և Լատինացուցը ընդունին. Հայոց զօրքն ու ժողովուրդը կատղելով՝ վրան վազեցին և զինքը սպաննեցին տարի մը թագաւորելէ ետքը։

62. Ճիւանին եղբայրը՝ Գուիտոն՝ Հայոց թագաւոր եղաւ. ասոր ատենը՝ Եգիպտացիք Կիլիկիա արշաւեցին և ամեն չարիք գործեցին. Գուիտոն վատութեամբ փախաւ բերդի մը մէջ ապաւինեցաւ։

63. Գուիտոն իր եղբօրը նման ջանք

ըրաւ՝ որ Հայերը Լատինացնէ, և մանաւանդ՝ սկսաւ Հայոց զօրքն ու իշխանները արհամարհել. անոնք ալ բարկացան ու զինքն սպաննեցին երկու տարիէն։

64. Գուիտոէն ետքը՝ թագաւոր եղաւ Կոստանդին Դ. Լատին իշխանը. ասիկայ Հայոց բարկութենէն վախնալով՝ խոհեմութեամբ վարուեցաւ հետերնին։

65. Կոստանդինի ժամանակը՝ Եգիպտացիք վերստին Կիլիկիա արշաւեցին անհամար զօրքով. բայց Կոստանդին՝ զանազան իշխաններու օգնութեամբ՝ պատերազմեցաւ անոնց դէմ և մեծ ջարդ տալով փախցուց զիրենք։

Կոստանդին 18 տարի թագաւորեց ու մեռաւ։

ԼԵՒՈՆ Զ.

ԼՈՒՍԻՆԵԱՆ

1365-1375

66. Կոստանդին Դ. ի մեռնելէն ետքը՝ Պապին ձեռքով Հայոց թագաւոր եղաւ Լեւոն Զ. Լուսինեան իշխանը. ասոր

ժամանակը՝ Եգիպտացիք սհադին բաղմութեամբ կիլիկիա արշաւեցին և շատ քաղաքներ ու գիւղեր կործանեցին։

67. Լեւոն փախաւ լեռներու մէջ պահուըտեցաւ, և երկու տարի չերևցաւ. իշխանները միացան և ուզեցին՝ որ ուրիշ մէկը թագաւոր պատկեն. բայց Լեւոն յանկարծ երևցաւ և վերստին թագաւորեց։

68. Քիչ ատենէն Եգիպտացւոց Էշրէֆ Շաղան անուն Սուլթանը՝ անհամար զօրքով կիլիկիա եկաւ, բոլոր քաղաքները տիրեց, Սիս մայրաքաղաքն ալ առաւ։

69. Շատ Հայեր նաև Լեւոն թագաւորը՝ ամուր տեղեր ապաւինեցան. Եգիպտացիք Լեւոնը բռնելով՝ Եգիպտոս գերի տարին և հոն բանտը դրին 1375 ին. այսպէս կործանեցաւ Ռուբինեանց թագաւորութիւնը՝ որոյ պատճառ եղաւ Հայոց տգիտութիւնն ու Լատին կրօնաւորաց և իշխանաց չարամտութիւնը։

70. Լեւոն՝ եօթն տարի բանտը կեցաւ. յետոյ ազատեցաւ. Երուսաղէմ ուխտի գնաց. անկէ Եւրոպա անցաւ. քանի մը տարի կեցաւ Սպանիա, Գաղղիա և

Անգլիա. և վերջապէս 1393 ին մեռաւ ի Փարիզ։

71. Լեւոն Զ. ի մարմինը՝ Փարիզ քաղաքը Գաղղիոյ թագաւորաց թաղուած Սէն—Տընի անուն եկեղեցւոյն փառաւոր դամբարանին մէջն է. և մինչև հիմա իր գերեզմանին վրայ կը տեսնուի իր արձանը՝ և Լատիներէն լեզուաւ տապանագիր մը գրուած է հետևեալ իմաստով։

ՀՈՍ ԿԸ ՀԱՆԳՉԻ

ԼԵՒՈՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԼԱՏԻՆ ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ

ԻՇԽԱՆ ԱԶՆՈՒԱԶՈՒՄ ԵՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

ՈՐ

ԻԻՐ ՀՈԳԻՆ ԱՒԱՆԴԵՑ

Ի ՁԵՌՍ ԱՍՏՈՒԾՈՅ

Ի 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1393

Ի ՓԱՐԻԶ

ՄԱՍՆ Զ.

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Բազրատունեաց թագաւորութեան կործանուելէն ետքը՝ Հայաստան քանի մը օտար իշխաններու ձեռք անցաւ. սոնք քառասուն տարի ամեն չարութիւն գործեցին անտէր Հայ Ազգին. յետոյ զանազան բռնաւորներ և թագաւորներ տիրեցին մինչև 1828, և այն ժամանակ Հայաստան Օսմանեանց, Ռուսաց և Պարսից իշխանութեան ներքև մնաւ։

2. Հայոց պատմութեան այս մասը երեք բաժանում ունի, որք են.

Ա. Հին ժամանակ,

Բ. Միջին ժամանակ,

Գ. Նոր ժամանակ։

Ա.

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՇԱԻԱՆՔ ԹԱԹԱՐԱՑ 1233-1340

3. Բազրատունեաց տէրութեան կործանելէն 40 տարի ետքը՝ Պարսից Մելիք

Շահ թագաւորն անհամար զօրքով Հայաստան եկաւ, Յոյները և արիշ իշխանները վանտեց և ինք տիրեց բոլոր երկրին։

4. Մելիք Շահի մեռնելէն ետքը՝ Թաթարները Հայաստան եկան, շատ մը քաղաքներու տիրեցին և սաստիկ նեղեցին զՀայերը, և վերջապէս բոլորը Հայաստանի տիրեցին։

5. Քրիստոսի 1233 թուականին՝ Հայաստան եկաւ Թաթարաց Զարմագան անուն զօրավարը. այս անգութ բռնաւորն ուր որ մարդ գտաւ ջարդեց, և գրեթէ մեր Հայրենի երկիրն անչէն անապատ դարձուց։

6. Այս առենները՝ մեր Ազգը տրկարացած էր, որովհետև ամենքն ալ տգէտ ըլլալով՝ չէին կրնար միաբանիլ և օտար թշնամին վանտել. ուստի ամեն մէկը մէյ-մէկ կողմ կը փախչէր անձը ազատելու համար. թշնամիք ալ զիրենք առանձին և տկար տեսնելով՝ կ'սպաննէին կամ գերի կը բռնէին։

7. Թաթարները բաւական ժամանակ Հայաստանի տիրեցին. իրենցմէ ետքը՝ Հա-

յաստան մտա մաս Պարսից, Օսմանեանց, Թիւրքմէնեանց և Թիւրքերուն իշխանութեան նաբքև մտաս։

ԼԷՆԿԹԻՄՈՒՐ

1387-1410

8, Էօշպէք կոչուած Թաթարներուն Լէնկթիմուր կամ Թիմուր Լէնկ թագաւորը՝ բոլոր Թաթարստանի տիրելէն ետքը Հայաստան արշաւեց։

9, Լէնկթիմուր այնպիսի անգթութիւններ բրաւ՝ որ նմանը չէ տեսնուած. անհամար մարդ ջարդեց. կատարի Թաթարները՝ որ քաղաքն որ մտան՝ կործանեցին ջարդեցին, յափշտակեցին և տանջեցին։

10, Շատ Հայեր՝ տարտափելով բոլոր ունեցածնին թողուցին և լեռները կամ անտառները փախան. շատերն ալ Հայաստանէն ելան և օտար երկիրներ գաղթեցին։

11, Կ'ըսուի թէ՝ Լէնկթիմուր Հայաստանի մէջ շատ մը գիրքեր ժողվեց,

և իր Սըմրղանդ քաղաքը տարաւ, ամուր աշտարակներու մէջ պահեց։

12. Լէնկթիմուր՝ Վան և Սեբաստիա քաղաքներուն տիրելէն ետքը՝ Վանայ բնակիչները բարձր տեղերէ վար նետելով սպաննեց. իսկ Սեբաստիոյ բնակիչներուն շատը՝ ողջ ողջ թաղել տուաւ. այս թշուառներուն թաղուած տեղը «Հոգիք կը կոչուի։

ԿԱՐԻՆԷ

ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՆ

13. Երբոր թշնամիները ամէն տեսակ չարիքով Հայաստանը կ'աւերէին, Կարինէ անուն Հայուհի մը հռչակաւոր եղաւ, ասիկայ երիտասարդ կին մ'էր և ութ տարեկան զաւակ մ'ունէր։

14. Կարինէ Թաթարաց ձեռքէն ազատելու համար՝ նիզակ մ'առաւ և զաւակին թիւէն բռնելով սկսաւ փախչիլ. Թաթարները եհետէն վազեցին. Կարինէ անհնարին ուժով վեց ոտքն անցամ ետ դարձաւ և իր թշնամիներէն շատերը գետինը փռեց։

15. Վայրենի Թաթարներն հեռացնեցին չատցան, և Կարինէ երբ տեսաւ՝ որ զինքը պիտի բռնեն, բարձր տեղ մը ելաւ, ձեռքովն իր զաւակը սպաննեց և յետոյ ինքզինքն ալ վերէն վար ձգեց ու մեռաւ։

16. Կարինէ՝ Հայ կիներուն մէջ ազգասիրութեան համար արիւն թափող Դիցաղնուհի մ'է. եթէ մեր Ազգին բոլոր կիներն ազատասէր և լուսաւորեալ ըլլային՝ Հայաստան միշտ ազատ, միշտ զօրաւոր և միշտ երջանիկ կ'ըլլար։

ԼԷՆԿԹԻՄՈՒՐԷՆ ԵՏՔ

1410-1603

17. Լէնկթիմուրի մեռնելէն ետքը՝ զանազան բռնաւորներ վերստին Հայաստան արշաւեցին, և շատ տարիներ մէկմէկու դէմ պատերազմեցան, դատած մարդերնին սպաննեցին և բոլոր երկիրներն ապականեցին։

18. Այս խռովութեանց ժամանակ՝ աստիկ սով եղաւ և թշուառ ժողովուրդը սկսաւ՝ կատու, մուկ, ծառի տերևներ և ուրիշ զանազան տեսակ ազտեղի բաներ ուտել. մինչև անգամ ոմանք իրենց բարեկամները, զաւակները, քոյրերը եայլն մորթեցին և կերան։

19. Այս սարսափելի աղէտները այնչափ շատցան Հայաստանի մէջ՝ որ շատ Հայեր ելան Խրիմ, Մոլտաւիա, Աւստրիա Հռովմ և ուրիշ երկիրներ գացին։

20. 1451 ին՝ տաճկաց Ֆաթիհ Մէհմէտ սուլթանը՝ Ջունայ Կոստանդին կայսեր դէմ պատերազմի ելաւ և Կ. Պոլսոյ տիրելով՝ Յունայ կայսրութիւնը կործանեցաւն առնն՝ շատ Հայ ընտանիք Հայաստանէն ժողվելով բերաւ Կ. Պոլսոյ մէջ բնակեցուց.

21. Սուլթան Մէհէմմէտ Բ. Կ. Պոլսոյ մէջ Հայոց Պատրիարքութիւն մը հաստատեց, և առաջին Պատրիարք դրաւ՝ Պուրսայու Յովակիմ եպիսկոպոսը։

Այս Պոլսոյ Պատրիարք ըսուածը՝ Տաճկաց իշխանութեան ներքև գտնուող բոլոր Հայոց գլուխն է։

22, Օսմանեանք՝ առաջին անգամ

Սուլթան Մեհեմմեդ Բ. ի ժամանակը Հայաստան յարձակեցան և յետոյ կամաց կամաց Պարսից ձեռքէն առին ամբողջ երկիրը 1585 ին։

ՇԱՀ ԱԲԱՍ

1603-1620

23. Պարսից Շահ Աբաս թագաւորը՝ Հայաստանի տիրելուզելով՝ անհամար զօրք ժողվեց և Օսմանցւոց դէմ պատերազմի ելաւ։

Իր անխիղճ զօրքերը շատ քաղաքներու և գեղերու տիրեցին։ ամենուն ունեցածը յափշտակեցին, և բիւրաւոր գերի բռնեցին. Շահ Աբաս՝ այս գերիները Պարսկաստան խաւրեց։

24. Օսմանցւոց Սուլթանը՝ շատ զօրքով իր Սինան բաշա զօրապետը՝ Շահ Աբասին դէմ ղրկեց, Շահ Աբաս խորհեցաւ՝ որ գուցէ Տաճիկներէն կը յաղթուի. ուստի որոշեց Հայաստանի մէջ գտնուող բոլոր Հայերը ժողվել և Պարսկաստան ղրկել։

25. Շահ Աբասի զօրքերը անլուր բբոնութիւններով Հայաստանի ամէն կողմերէն հարիւր քսան հազարէն աւելի Հայ ժողովեցին, և Սարատեան ընդարձակ դաշտը բերին։

26. Շահ Աբաս երբ լսեց՝ որ Սինան բաշայ շուտով պիտի գայ հասնի, ուզեց որ ժողվուած Հայերն անմիջապէս Պարսկաստան ղրկէ. ուստի հրաման ըրաւ որ ժողովուրդը Երախս ըսուած գետէն անցնի։

27. Երախս գետէն անցնելու համար շատ նաւակներ չը կային. Պարսիկները բակրսան ծեծելով և վիրաւորելով ստիպել՝ որ ամէնքն ալ գետն իջնան և լողալով անդիի կողմը անցնին։

28. Երբոր խեղճ Հայերը կուլային իրենց խեղճութեան վրայ՝ Պարսից զօրքերը շատ մը մարդ սպաննելով՝ անոնց դլուխները ցիցերու վրայ անկեցին և ժողովուրդը սարսափեցնելով ամէնը մէկէն գետը նետեցին։

29. Տասը հազարէն աւելի մարդիկ և տղայք գետին ջուրերուն մէջ խեղդուեցան. իսկ աղատողներուն մէջէն քանի մը հազար տղայք և աղջիկներ կորսուեցան,

որովհետև Պարսից զօրքերը զանոնք առեր փախեր էին։

30. Ա.յս խեղճութիւններէն աղատուողները՝ Պարսկաստանի մէջ տեղաւորեցան. և Շահ Աբաս սկսաւ քաղցրութեամբ վարուիլ անոնց հետ, որպէս զի քիչ առենէն չըփախչին։

31. Պարսիկք Ջուղայ քաղաքն ալ այրեցին և բնակիչները Պարսկաստան տարին. ասոնք հոն քաղաք մը շինեցին և անունը դրին Նոր Ջուղայ։

32. Շահ Աբաս՝ Օսմանցւոց հետ երկարատև պատերազմներ ընելէն ետքը՝ հետերնին հաշտութիւն բրաւ. և Հայաստան երկուքին մէջ բաժնուեցաւ. Արևելեան մասը Պարսից, իսկ Ա.րևմտեան մասը Օսմանցւոց ձեռքը մնաց։

ԴԱՒԻԹ ՍԻՒՆԻ

1722-1728

33. 1720 ին՝ Լազ կոչուած ժողովուրդը Հայաստան յարձակեցաւ. քանի մը կըտրիճ Հայեր միացան և իրենց դլուխ դըրին Դաւիթ Սիւնի իշխանը։

34. Դաւիթ Սիւնի՝ իրեն օդնական առաւ Մխիթար և տէր Ա.ւետիք անուն զօրապետները. և քանի մը հազար հոգի ժողվելով՝ պատերազմեցաւ Պարսից և Լազերուն դէմ, և վանտեց զանոնք Հայաստանի մէկ մասէն։

35. Դաւիթ՝ Հոլիճոր անունով բերդ մը շինեց. Ցաճիկները 70000 հոգի միացած՝ Դաւիթի վրայ եկան. Դաւիթ 400 քաջ Հայեր հետն առնելով՝ պատերազմեցաւ և 13000 հոգի ջարդեց թշնամիներէն, մնացածներն ալ ցրուեց։

36. Դաւիթ վեց տարի քաջութեամբ կառավարեց իրեն հետ միացող հայերը, և խաղաղութեամբ մեռաւ. իրեն յաջորդեց Մխիթար. բայց քանի մը մատնիչ և չարագործ Հայեր՝ Մխիթարը սպաննեցին և դլուխը կտրելով Դավրէժ քաղաքի փաշային տարին։

37. Դավրէժի փաշան այս անիրաւներուն գործած սոսկալի վատութիւնը

տեսնելով՝ բարկացաւ՝ և գլուխին կարել տուաւ։

Ամէն մատնիչներ իրենց մատնութեան պատիժը կ'ընդունին.

38. Մխիթարէն եաքը քանի մը Հայ իշխաններ ալ ջանք ըրին՝ որ աղատ ըլլան. բայց մէկ մէկու հետ միաբան և սիրով չըլլալնուն՝ ամէնն ալ յաղթուեցան, և Հայաստան դարձեալ Օսմանցւոց և Պարսից իշխանութեան ներքև մնաւ։

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՅ

1715

39. Մխիթար անուն Սեբաստացի դիտական վարդապետը՝ 1715 ին՝ Վենետիկ քաղաքին մօտ՝ կղզիի մը մէջ Ս. Ղազար անունով վանք մի շինեց՝ և Հայաստանի զանազան կողմերէն աշակերտներ ժողովելով՝ սկսաւ անոնց ուսմունք և կրթութիւն տալ։

40. Մխիթար վարդապետ՝ տեսաւ որ Լատին կրօնաւորները զինքը հանդիսաւոր՝ են թողուր. ինքն ալ յանձն առաւ՝ որ Պապին հլու մնայ և ասանկով Մխիթար բոլոր վանականով կաթոլիկ եղաւ. իր բոլոր աշակերտներն իր անունով Մխիթարեան ըսուեցան։

45. Մխիթար վարդապետի աշակերտներէն ոմանք՝ Ս. Ղազարու վանքէն ելնելով՝ Վիէննա գացին և, հոն Պաշտպան Ս. Աստուածածին անունով վանք մը հաստատեցին և սկսան արուեստից ու գիտութեանց զբաղիլ։

42. Թէ Վենետիկի և թէ Վիէննայի վանքերէն՝ շատ ընտիր գիտականներ և ուսումնականներ ելած են. ինչպէս Զարիչարեան. Ադոնց. Սիւրմէլեան. Թովմաճան. Ինճիճեան. Աւետիքեան. Սարգիս Թէոդորեան. Ա. Մատաթիա Քարտաքաշեան. Այվազովսքի. Եդուարդ Հիւրմիւզեան. Աւքերեան. Բագրատունի Ս. Բսէն Կոմիտաս. Ղեւոնդ Ալիշան. Խորէն և Ս. Բոսիոս Քալֆաեան՝ և ուրիշ շատ հռչակաւոր անձինք. ասոնք բազմաթիւ թարգմանութիւններ և հեղինակութիւններ գրած հրատարակած են։

43. Այվազովսքի և Գալֆաեան Ա.

և Խ. և Թէոդորեան վարդապետները ասկէ 15 տարիի չափ առաջ Կաթողիկութիւնը ձգեցին և Լուսաւորչական եղան։ Ասոնց կարգէն է նաև Մ. Գարագաշեան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԸ.

44. 1451 ին՝ Տաճկաց Ֆաթիհ Մէհէմմէտ Սուլթանը՝ Կ. Պոլիսը առաւ և Յունաց կայսրութիւնը կործանեց. այն ատեն Պրուսայի Յովակիմ Եպիսկոպոսը Պոլիս կանչեց. և զանի՝ իր իշխանութեան ներքև եղող Հայերուն վրայ հոգևոր գլուխ այսինքն Պատրիարք դրաւ։

45. Յովակիմէն ետքը հետզհետէ շատ մը պատրիարքներ նստան Կ. Պոլսոյ մէջ, և ասոնք ամէնքը կամ Վարդապետ կամ Եպիսկոպոս էին։

46. Այս Վարդապետներէն կամ Եպիսկոպոսներէն շատերը՝ պատրիարք ըլլալու համար ամէն տեսակ չարիք կը գործէին ժողովուրդը կը խաբէին, և Տաճկի փաշայներու դրամ տալով՝ պատրիարքութիւնը ծախու կ'առնէին.

47. Պատրիարքաց այս չար գործեցուն համար՝ շատ անգամ ժողովրդեան մէջ խռովութիւն կ'ելնէր. որովհետև Պատրիարքները բռնութեամբ ասկէ անկէ ուղածնին կ'առնէին. և չը տուողը շատ անգամ բանտարկել կամ մեռցնել կուտային։

48. Շատ մը հարուստներ ալ՝ լաւ Պատրիարքներուն հակառակելով՝ զանոնք կը հանէին և երբեմն քանի մը աշխարհականներ մէկտեղ գալով պատրիարքի տեղակալութիւն կ'ընէին։

Այս աշխարհականները Պապ կը կոչուէին։

49. Կ. Պոլիսէն զատ՝ Հայ պատրիարք մ'ալ Երուսաղէմ քաղաքը Ս. Յակոբ անուն վանքին մէջ հաստատուած էր. և երբեմն կ'ըլլար որ թէ Կ. Պոլսոյ և թէ Երուսաղիմայ Պատրիարքը՝ մէկ հոգի մը կ'ըլլար.

50. 1700 ին առաջները Պոլսոյ Պատրիարքներուն մէջ երևելի եղաւ Աւետիք վարդապետ անուն Աղգատէր և ճարտարախօս անձը. ասիկայ իր անոյշ բնաւորութիւնովը Կ. Պոլսոյ մէջ եղող կա-

թոլիկ Հայոց սիրաը շահեցաւ. և համոզեց որ Հայոց եկեղեցին հետ միանան։

51. Լատին կրօնաւորները զանազան խարդախութիւններ բանեցնելով՝ Աւետիքը Պատրիարքութենէ ձգել տուին. և վերջապէս գաղտնի կերպով նաւու մը մէջ դրին ու Գաղղիա ղրկելով բանտարկեցին մինչև որ մեռաւ։

52. Կ. Պոլսոյ պատրիարքներուն մէջ նշանաւոր եղան նաև Յովհաննէս Կարա՝ որ շատ եկեղեցիներ շինեց և ՀԱՅՐԸ խաղաղութեան մէջ պահեց. և Նալեան Յակոբ՝ որ ուսումնական անձ մ'էր և շատ գրքեր գրեց. նաև աստուածաբան Յովհաննէս պատրիարք։

53. Երուսաղեմայ Պատրիարքներուն մէջ ամենէն հռչակաւորն եղաւ Գրիգոր վարդապետ. ասոր ատենը Ս. Յակոբայ վանքը շատ պարտական եղած էր. և օտարները կ'ուզէին՝ որ Հայոց ձեռքէն յափշտակեն այն վանքը. Գրիգոր վարդապետ՝ Պոլսոյ մէջ՝ վիզը շղթայ կախեց և այնպէս դրամ ժողվելով Ս. Յակոբայ վանքը պարտքէ ազատեց։

Գրիգոր վարդապետ Եմիսոնէ կոչուեցաւ։

Բ

ՄԻՋԻՆ ԺԱՄԱՆԱԿ

ՌՈՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

1828

54. 1828 ին՝ Ռուսերը Պարսից հետ պատերազմելով՝ անոնց յաղթեցին և Հայաստանի մէկ մասին տիրեցին. որով Հայաստանի իշխանները եղան՝ Տաճկի տէրութիւնը. Ռուսի տէրութիւնը՝ և Պարսից տէրութիւնը։

55. Ռուսի տէրութիւնը քրիստոնեայ ըլլալով՝ երբոր Հայաստանի մէկ մասին տիրեց՝ շատ մը Հայեր Պարսկաստանէն եկան և Ռուսաց երկիրը գացին. բայց Ռուսները՝ իրենց բռնութիւնովը սկսան չարչարել զանոնք։

56. Ռուսի Հայաստանին մէջ շատ եր-
ևելի Հայեր եկան և զօրապետութիւնը-
նելով թշնամեաց դէմ մեծամեծ քաջու-
թիւններ ըրին. ասոնց մէջ անուանի են
Մատաթեան. Բէհբուտեան. Երկայնաբա-
ղուկն Արզութեանց. Մովսէս Կնէազ և
ուրիշ շատեր։

57. Ռուսի Հայաստանին մէջ գտնուող
Հայերը արուեստից և վաճառականու-
թեան շատ հետամուտ են։
Դպրոցներ ալ ունին, բայց Ռուսաց տէ-
րութիւնը հրաման տուած է որ Ռուսերէն
լեզուն և Ռուսաց պատմութիւնը սովրե-
ցընեն առաջ՝ քան Հայոցը։

58. Ռուսի Հայաստանի մէջ Հայերէն
լրագիրներ ալ հրատարակուած են, որոց
մէջ հռչակաւոր եղած է՝ Հիւսիսափայլ
անուն լրագիրը. այս լրագիրը կը խմբա-
գրէր Միքայէլ Նալբանդեանց անուն
ուսումնական և հայրենասէր երիտասարդը։

59. Ռուսիոյ տէրութիւնը Նալբանդ-
եանց Միքայէլի դէմ հալածանք հանեց և
զանի Սիպերիա ըսուած ճիւնալի երկիրն
աքսորեց, Միքայէլ Նալբանդեանց իր
աքսորանաց մէջ մեռաւ դրեթէ 30 տա-
րեկան։

60. Ռուսիոյ տէրութիւնը չանք կ՚ը-
նէ զՀայերը Ռուս ընելու. և ասոր հա-
մար շատերու մեծամեծ պատիւ և իշխա-
նութիւն կը խոստանայ. և յաջողած է
շատ մը Հայեր իր կողմը դարձնելու։
Ուսմունքը և գիտութիւնը մեզի կը-
սովրեցնեն. թէ ով որ իր Ազգը Հայրենիքը
չսիրեր, վատ է։

61. Ռուսի Հայաստանին մէջ է մեր
Ս. Դրիգոր Լուսաւորչին շինած Էջմիա-
ծին վանքը. և հոն կը նստի մեր ընդհա-
նուր Կաթուղիկոսը։

ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

1828

62. 1828 թին՝ Ռուսերը Պարսից Հա-
յաստանի մէկ մասն առին. և Պարսից
իշխանութեան ներքև պզտիկ մաս մը մնաց
ուր երեք չորս հարիւր հազար Հայեր կը-
բնակին. ասոնք դրեթէ ամենքն ալ ուս-

մանքէ և կրթութենէ զուրկ են. կանոնաւոր վարժարան և լրագիր չունին։

63. Պարսից Հայաստանի Հայերը միշտ չարաչար նեղութիւն կը կրեն Պարսիկներէն. վասն զի Պարսիկները Մահմետական ըլլալով թշնամութեամբ կը նային Հայոց վրայ. այս պատճառաւ Պարսից իշխանութեան ներքև գտնուող Հայերը ընդհանրապէս աղքատ և չքաւոր են։

64. Պարսից Հայաստանին Հայերը՝ իրենց քաշած նեղութիւններէն ազատելու համար՝ մեծ բազմութեամբ Ռուսաստան և Հնդկաստան գաղթած են և ասով Հնդկաստանի Հայերը հետզհետէ շատնալով մեծ վաճառականութեան ձեռք զարկած են։

65. Պարսկաստանէն Հնդկաստան գընացող Հայերը շատ հարուստ են, և ուսման ու կրթութեան մէջ ալ յառաջացած են. ասոնց մէջ երևելի եղած է Սամուէլ Մուրատ վաճառականը. ասոր դրամովը Փարիզ քաղքին մէջ Մուրատեան անունով վարժարան մը բացուեցաւ. նոյնպէս Ռաֆայէլ վաճառականին կտակած դրամովը Վենետիկի մէջ Ռաֆայէլեան վարժարան մը բացուած է։

ՏԱՃԿԻ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ ԲՆԱԿՈՂ ՀԱՅՔ

66. Տաճկի տէրութեան ներքև բնակող հայք վաղուց հետէ երկպառակութեան մէջ էին. որովհետև Լատին կրօնաւորները ամէն ջանք ընելով մաս մը Հայեր պապական ըրած էին և կ'աշխատէին որ բոլոր Հայերն ալ իրենց կողմը շահին։

67. 1700ին ատենները երբոր Աւետիք Պատրիարք Լատինաց ձեռքով անյայտացաւ, Պոլիս գտնուող Հայերը սկսան բոլորովին հեռու կենալ լատին կրօնաւորներէն, և այն ժամանակ Լուսաւորչական Հայոց և Պապական Հայոց մէջ երկպառակութիւնը սաստկացաւ։

68. Լուսաւորչական և Պապական Հայոց երկպառակութիւնը շատ մեծ վնասներ պատճառեց. վասն զի երկու կողմն ալ

սկսան մէկզմէկ բամբասել, տէրութեան առջև ամբաստանել, մէկզմէկ ծեծել, և մինչև անգամ մէկզմէկ սպաննելու կամ աքսորել տալու համար Ցաճիկ նախարարաց մեծագումար դրամ և ընծայներ կուտային։

69. Լուսաւորչական Հայոց ամիրայները բռնաւորութեամբ կուզէին որ Պապական Հայերն իրենց հնազանդին. այս բռնութեան պատճառը իրենց ազգէտ ըլլալն էր. նաև Պատրիարքներն ալ ամիրայից բռնութեանը նմանելու համար՝ շատ անգամ Պապական Հայերէն զոմանս կ'աքսորէին, զոմանս կը բանտարկէին և զոմանս կը ծեծէին կամ տուգանաց կը դատապարտէին։

70. Հին Պապական Հայերը՝ իրենց յատուկ եկեղեցի չունէին. Լուս. Հայոց եկեղեցին կը յաճախէին և Հայոց ծիսովը կը վարուէին. բայց երբոր իրենց դէմ բռնութիւններ տեսան, սկսան ջանալ՝ որ իրենց յատուկ Պատրիարք Եկեղեցի և Քահանայ ունենան և այսպէսով բոլորովին զատուին Լուս. Հայերէն։

71. Լատին կրօնաւորներն այս եղերութիւնները յարմար առիթ սեպելով՝ ընկրսան ժողովուրդը գրգռել, բայց Լուս. Հայոց խոհեմ և հանճարեղ մասը փութայ չարութիւններուն առջևն առնուլ. և երկու կողման դիտական անձինքը ժողովեցան որ հաշտութիւն ընեն և Լուս. ու Պապական Հայերը կրօնապէս միացնեն։

72. Սէրբեան Եպիսկոպոսը՝ մեր Պօղոս Ա. Պատրիարքին ժամանակը եղաւ, և շատ մը վէճերէ ետքը՝ այն դիտական անձինքը որոշեցին՝ որ Լուս. և Պապական Հայերը միանան, և այս նպատակաւ Հրաւէր Սէրոյ անունով մեծարակ մը տպեցին։

73. Լատին կրօնաւորները շատ մեծ խռովութիւն ձգեցին Հայոց մէջ. ինքզինքնին Հայ ձևացնելով գնացին այս և այն կողմ ժողովուրդը ոտք հանեցին ըսելով թէ «Պօղոս Պատրիարքը Պապական եղեր է» և այլն։

74. Ժողովուրդը խուռն բազմութեամբ Պատրիարքարան վազեց որ Պօղոս Պատրիարքը բռնէ. բայց անիկայ պատուհանէն փախաւ. տէրութիւնը երբոր այս եղածները լսեց, շատ մարդ ձեռք անցուց

և բանտարկեց, քանի մը երեւելի մարդիկ ալ մատնուեցան և սպաննուեցան։

75. Այս սպաննողներուն մէջ էին՝ Սաքայեան Գրիգոր ամիրայ՝ որ գլխատուեցաւ, և տէլի Պաղտասար՝ որ կախուեցաւ. իսկ Պէշճեան Յարութիւն ամիրան՝ Իլիմիա ըսուած կղզին աքսորուեցաւ, բայց քիչ ատենէն ազատուելով Պոլիս դարձաւ։

76. 1827 դեկ. 27 ին՝ ձմեռ ատեն՝ Օսմանցւոց Սուլթան Մահմուտ ինքնակալին հրամանաւը՝ Պոլիսի մէջ գտնուող բոլոր Պապական Հայերը Պոլիսէն աքսորուեցան, և այս աքսորանաց մէջ շատ անմեղ ընտանիք և աղայք ճամբու նեղութիւններուն չդիմանալով մեռան։

77. Այս հալածանքն անոր համար եղաւ՝ որ Սուլթան Մահմուտ Եւրոպայի տէրութեանց դէմ թշնամութիւն ունէր, և Պապական Հայերն ալ՝ Եւրոպայի ազգաց հետ յարաբերութիւն ունէին ուստի և աքսորուեցան։

78. 1830 յունվար վերջին Պապական Հայերը իրենց աքսորէն դարձան 'ի Պոլիս, որովհետև Սուլթանը Եւրոպայի տէրութեանց հետ հաշտութիւն ըրաւ։

79. Հռովմէականք իրենց աքսորէն դառնալէն ետքը Պաղդիոյ դեսպանին միջնորդութեամբը՝ իրենց յատուկ Պատրիարք ահմանեցին. և այսպէս Լուս. և Պապական Հայերը բոլորովին մէկմէկէ բաժնուեցան։

ՊԷՉՃԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

ԱՄԻՐԱՅ

1771 - 1834

80. Պէշճեան Յարութիւն ամիրայ՝ Պօղոս անունով կտաւ ծախող «պէշճի» մէկու մը զաւակն էր. 1771 ապրիլ 10 ին ծնաւ, իր տղայութեան ատեն հաշիւ քիչ մը կարդալ գրել սովրեցաւ, որովհետև այն ատեն վարժարաններ և ուսմունք չը կային, յետոյ մետաքսավաճառի քովաշակերտ եղաւ։

81. Պէշճեան՝ իր աշխատութեամբը օրէ օր յառաջանալով՝ Ֆիւզեան ընտանի-

քին քով գործակատար եղաւ. այս Տիւզեան ընտանիքը՝ Պապական էր, և Օսմանեան պետութեան փողերանոցին դրամահատութեան պաշտօնը կը վարէր։

82. Փողերանոցի գործերը շատ խառնակ էին. այս պատճառաւ Տիւզեան Զէլէպիները թիւնամիներու ամբաստանութիւնով հալածուեցան. իրենցմէ ոմանք բանտարկուելով՝ բանտին մէջ մեռան, ոմանք աքսորուեցան և ոմանք ալ կախուեցան Սուլթանին հրամանաւը։

83. Սուլթան Մահմուտի հրամանով՝ փողերանոցին դրամահատութեան պաշտօնը Յարութիւն Պէզճեանի յանձնուեցաւ. և Պէզճեան՝ անձնուիրութեամբ կատարեց իր յանձն առած պաշտօնը. իր կենացը մէջ մեծամեծ և նշանաւոր ծառայութիւններ մատոյց թէ Օսմ. Պետութեան և թէ հայ ազգին. Սուլթան Մահմուտ ալ իր սիրոյն նշան մը տալու համար՝ Ս.Բ.քայական պատկերի «Թատիրի Հիւմայուն» պատուանշանը տուաւ Պէզճեանի. և միշտ անոր հետ ընկերութեամբ կ'ապրէր։

84. Պէզճեան շատ ուսումնասէր և Պոլիսի շատ կողմերը դպրոցներ ու եկեղեցիներ շինել տուաւ, և ամեն մէկուն շատ դրամ կտակեց. Եէտիգուլէի Ազգ. հիւանդանոցը կառոյց՝ և անոր առատ հասոյթ պատրաստեց, Հայաստանի շատ կողմերն ալ զանազան շէնքեր շինեց և ընծայներ ղրկեց։

85. Պէզճեան ոչ թէ միայն Հայոց՝ այլ նաև ուրիշ ազգերու ալ ամեն օգնութիւններ ըրաւ իր կենացը մէջ. Հայոցպէսով իր բարի անունը անմահացուց. Չանք ըրաւ՝ որ Պապականները Լուս. Հայոց հետ միացնէ, բայց Լատին Կրօնաւորներ և Լատինացեալ Հայեր՝ միշտ արգելք եղան իրեն։

86. Պէզճեանի ժամանակ՝ Պոլիսի մէջ շատ մը Հայ ամիրայներ կային։ Ասոնք տէրութեան և Փաշայներուն սեղանաւորներն էին. մէջերնէն շատերը կուզէին՝ որ իրենց հարստութիւնովը ազգին վրայ բռնութիւն ընեն, բայց Պէզճեանէն վախնալով հանդարտ կը կենային։

87. Ս.յս ամիրաները՝ տէրութեան երկիրները տարուէ տարի ծախու կ'առնէին՝ որպէս զի տասանորդ տուրքը ժողվեն, և

չատ անդթութիւններ կ'ընէին նոյն իսկ Հայոց դէմ, Պէշճեան շատ անդամ կը յորդորէր ղիրենք՝ որ ժողովուրդը չըհարբատահարեն, բայց չըկրցաւ զանոնք ուղղութեան բերել։

88. Պէշճեան ամիրայ՝ 1834 յունվար 7 ին վախճանեցաւ, և Հայք՝ Սուլթանին հրամանաւ՝ իր մարմինը՝ Գումղաբու իր շինել տուած Մայր եկեղեցւոյ գաւիթը թաղեցին։

Վ. Ա. Ր Ժ Ա. Ր Ա. Ն Ք

1836 - 1860

89. Պէշճեան ամիրայի կենդանութեան ժամանակ՝ Հայ ազգը կամաց կամաց սկսաւ Վարժարաններ ունենալ Պոլիսի մէջ. այս Վարժարանաց գլխաւորներն էին Գումղաբուի Մայր Վարժարանը՝ զոր Պէշճեան իր ծախքովը կը հոգար. նաև Խասգիւղի Վարժարանը՝ որու ծախքը գլխաւորապէս կը հոգայր Ճեզայիրլեան Մկրտիչ ամիրան, նաև Սամսոնիոյ Ս. Սահակեան Վարժարանը. ու Ս. զդ. հիւանդանոցին մէջ Ս. Փրկչեան գիշերօթիկ վարժարանը։

90. Տգէտ և անխելք մարդիկ՝ սկսան դպրոցներուն հակառակել, և ամէն ջանք բրին մինչև որ Խասգիւղի Վարժարանը գոցել տուին, բայց ուսումնական և ազգասէր Հայերը միացան և Իւսկիւտարու մէջ ճեմարան մը բացին 1838 ին։

91. Այս Վարժարանները չատ ընտիր աշակերտներ հասցուցին, և ժողովուրդն ալ սկսաւ ուման ու կրթութեան սէր ցուցընել. այս պատճառաւ հետզհետէ Պոլսոյ ամէն թաղերուն մէջ Վարժարաններ բացուեցան։

92. Պոլիսէն դատ՝ Ֆաճկի Հայաստանին դրեթէ ամէն կողմը Վարժարաններ բացուած են, որոց մէջ հռչակաւոր եղած են Զմիւռնիոյ և Սեբաստիոյ Վարժարանները։

93. Այս Վարժարաններէն ելնող աշակերտներէն՝ ոմանք հեղինակ եղած են. ոմանք թարգմանիչ, ոմանք ուսուցիչ և այլն. որով քիչ ժամանակէն ուսմունքը տարածուեցաւ Հայոց մէջ, բայց ազգայք արուեստ չըսովրելով դպրոցէ ելնելէն ետք՝ կան ու-

մանք՝ որ մինչև իսկ խեղճ ու չքաւոր կը-
մնան։

94. Մանչ տղայքը կրթելէ ղկնի աղջիկ տղայոց համար ալ Վարժարաններ բացուեցան Պոլսոյ մէջ 1830 էն'ի վեր, և գաւառաց մէջ ալ 1845 էն'ի վեր։ այս Վարժարանները հետզհետէ ծաղկելու և աշակերտուհիներ հասցնելու վրայ են եթէ աղէկ նայուին։

95. Ազգին երևելի վարժապետներուն մէջ առաջիններն եղած են, Գրիգոր պատուելի Փէշտիմալճեան. Խաչատուր վարժապետ Սամաթիոյ. տիրացու Յարութիւն. Տէր Մեսրովպ քահանայ. Թադեոս վարժապետ. Տէր Յոհան Միրզա Վանանդեցի Զմիռնիոյ վարժապետ, և ուրիշներ. այս անձինք՝ թէ իրենց ուսմունքովը և թէ անձնուիրութեամբն անուանի եղած են ազգին մէջ։

96. Ազգին մէջ ուսմունքը և գիտութիւնները ծաղկեցնելու աշխատողներէն մէկն ալ եղաւ Փափազեան Մինէճի Անդրանիկ. այս վսեմախոհ անձը՝ երկար ժամանակ Սամաթիոյ Ս. Սահակեան Վարժարանի տեսչութիւնը վարեց և երևելի աշակերտներ հասցուց։

Սահակեան Վարժարանի աշակերտներէն շատերն այսօր հռչակաւոր եղած են։

ԹԱՆԶԻՄԱԹ

1839 Նոյ". 3

97. Սուլթան Մահմուտի մեռնելէն ետքը՝ իրեն յաջորդեց իր որդին Սուլթան Մէճիտ. ասիկայ 1839 նոյեմբեր 3 ին Թանզիմաթ ըսուած օրէնքը հրատարակեց։

Թանզիմաթի օրէնքն այն էր որ՝ Ցաճկաստանի մէջ և ամէն տեղ Ցաճիկ՝ Հայ՝ Յոյն՝ և ուրիշ ազգեր՝ հաւասար պիտի սեպուէին, և մէկն ալ միւսին վրայ բռնութիւն բանեցընելու իրաւունք պիտի չ'ունենար. այս օրէնքով՝ բոլոր հպատակ ժողովրդոց ազատութիւն տրուեցաւ, և տաճիկները կամաց կամաց իրենց բռնութիւններէն ետ կեցան։

98. Թանզիմաթի օրէնքը չը հաստատուած՝ Թավուքճեան Յովակիմ անուն երիտասարդը՝ կրօնքի համար՝ տաճկի տէրութեան հրամանատ հրապարակաւ դիմաստոս-

ցաւ. վասն զի՝ թէպէտ և այս երիտասարդը Քրիստոնեայ էր, բայց դէպքով մը տաճկացած էր և Եաքն ալ ըրածին վրայ զղջալով քիչ մը ատենէն դարձեալ քրիստոնեայ եղեր էր։ Եւրոպայի տէրութիւնները խնդրեցին Սուլթանէն՝ որ Տաճկաստանի մէջ եղող Քրիստոնէից՝ կրօնքի ազատութիւն տուի։ Այս դէպքէն դրեթէ անմիջապէս ետքը Թանզիմաթն հաստատուեցաւ։

99. Թանզիմաթի օրէնքը հաստատուած ժամանակ՝ Հայ ազգին կառավարութիւնը՝ ամէն կերպով՝ Պատրիարքին և ամիրայներուն ձեռքն էր. առանք իրենց ուզածին պէս առանց օրէնքի կը վարուէին ժողովրդեան հետ. մանաւանդ ամիրայները՝ որոնք իրենց կամքին համեմատ Պատրիարք կը դնէին ու կը փոխէին։

100. Հայաստանի մէջ բնակող խեղճ Հայերը՝ հոնտեղի առաղակ վայրենիներէն չատ չարչարանք կը քաշէին, ամիրայներն ալ զանոնք մեղքնալու տեղ՝ ալ առելի չարիք կը հասցնէին, ուստի Պոլիսի Հայոց խելացի և ազգասէր անձինքը միացան և երդում ըրին որ ամիրայից իշխանութիւնը կործանեն և անոր տեղ ժողովրդեան իշխանութիւնը հաստատեն։

101. 1844 Յուլիս 17 ին՝ Հայոց Պատրիարք եղաւ Մատթէոս Եպիսկոպոս, ազգասէր ուղեց՝ որ ժողովուրդը և ամիրայները միկմիկու հետ հաշտեցնէ, այն ատեն՝ 1848 Մայիսի մէջ՝ Տէրութեան կողմանէ հրաման եկաւ՝ որ Պատրիարքարանի մէջ երկու ժողովներ հաստատուին. այս ժողովներուն մին կը կոչուէր Գերագոյն (քաղաքական) ժողով՝ իսկ միւսը Հոգևոր (կրօնական) ժողով։ Երբոր ժողովները հաստատուեցան, ա՛լ ամէն մարդ զգաց՝ որ Ազգային օրէնք մը դնել հարկ է, և ամէնքն սկսան նոյնը մը հաստատելու ջանք ընել։

102. Ամիրայները տեսան որ օր ըստ օրէ իրենց իշխանութիւնը կը պակսի, ուստի ամէն միջոց բանեցուցին և Մատթէոսը Պատրիարքութենէ ձգեցին. ժողովուրդն ալ ոտք եկաւ և Յակոբոս Եպիսկոպոսը Պատրիարք դրաւ. այն ատեն ամիրայները հասկըցան որ իրենց համար ամէն բան լըմընցած էր։

103. Յակոբոս Պատրիարքի ժամանակ՝

Կ. Պոլսոյ մէջ Ազգային Վարժարանները զարգացան. որովհետև ժողովուրդը տեղ տեղ ընկերութիւններ հաստատեց և դրամ ժողվելով վարժարաններուն մէջ զանազան դիտութիւններ եւ լեզուներ սովրեցուցանել սկսաւ։

ԽՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

1853

104. 1853 ին՝ Տաճկի. Գաղղիոյ. Անգլիոյ և Սարտենիոյ տէրութիւնները միանալով մեծ պատերազմ բացին Ռուսի դէմ. որովհետև Ռուս կ'ուզէր՝ որ Տաճկաստան իր ազդեցութեան ներքև առնու. այս պատերազմը երեք տարի տևեց. Ռուսք յաղթուեցան և Տաճկի տէրութիւնը անոր դորձել ուզած թշնամութենէն ազատեցաւ։

105. Խրիմի պատերազմէն ետքը՝ Տաճկի տէրութիւնն սկսաւ Եւրոպայի հետ հաղորդակցութիւններ ունենալ, և ասանկով մեր ազգն ալ սկսաւ Եւրոպացւոց ծանօթանալ. այն ատեն շատ մը Հայ պատանիք

Եւրոպայի մեծ մայրաքաղաքները գացին զանազան տեսակ արուեստներ և ուսումներ սովրելու։

106. Այն ատենները նաև՝ ազգին մէջ երևելի եղաւ Պալեան Կարապետ ամիրային անդրանիկ որդին Նիկողոս ամիրայ. այս լուսաւորեալ և ազգասէր անձը՝ տեսաւ որ ազգը օրէ օր յառաջ կ'երթայ և Եւրոպայի նմանիլ կ'ուզէ, խորհեցաւ Ազգային Սահմանադրութիւն մը խմբագրել, և քանի մը հոգի ալ իրեն հետ միացան՝ այս մեծ ու կարևոր աշխատութիւնը կատարելու համար։

107. Խրիմի պատերազմէն առաջ՝ այսինքն 1837 ին՝ Տաճկաստանի մէջ առաջին անգամ Հայերէն լրագիր մը հրատարակուիլ սկսաւ 'ի Զմիւռնիա. այս լրագրոյն խմբագիրն էր Ղուկաս Պալթազարեան, անկէ ետքը սկսաւ Կ. Պոլսոյ մէջ Հայերէն լրագիր հրատարակուիլ. մանաւանդ Խրիմի պատերազմէն ետքը՝ այս լրագիրներուն թիւը հետզհետէ շատցաւ, և Հայերէն գրականութիւնն երթալով ծաղկեցաւ։

108. Այս լրագիրներուն հրատարա-

կութենէն սա մեծ օգուտն յառաջ եկաւ՝ որ ժողովուրդը օր քան զօր արթնցաւ և լուսաւորուեցաւ, ուստի շատերն սկսան Ազգային Սահմանադրութիւնը հաստատելու աշխատիլ՝ որպէս զի ամիրայից և էշխան կոչուած խել մարդոց բռնութիւններէն ազատին. ամիրայները ու իշխանները երբոր ժողովուրդին այս շարժումը տեսան՝ ջանք ըրին որ արգիլեն, սակէ մեծ հակառակութիւն ծագեցաւ։

109. Յակովբոս պատրիարքէն ետքը՝ 1853 ին՝ Գէորգ եպիսկոպոս պատրիարք եղաւ. սակայ չկրնալով ժողովուրդը դոհ ընել, սիրպուեցաւ երկու տարիէն հրաժարիլ և իրեն յաջորդեց Սարգիս եպիսկոպոս 1860 Մայիսի 14 ին, և պատրիարք ըլլալէն տասն օր վերջը՝ այսինքն 1860 Մայիսի 24 ին՝ Ազգային ընդհանուր ժողով դումարուեցաւ Քում-Գաբուի մայր եկեղեցին՝ ուր անթիւ բազմութիւն հաւաքուած էր, և հոն պաշտօնապէս հաստատուեցաւ մեր Ազգային Սահմանադրութիւնը։

110. Ազգային Սահմանադրութեան ամենէն գլխաւոր սկզբունքը սա է.

«Ամեն մէկ անհատ՝ պարտական է իւր Ազգին, և ազգն ալ՝ պարտական է իւր ամեն մէկ անհատին։ Այսինքն՝ թէ ընդհանուր Ազգը և թէ Ազգին ամեն մէկ անհատը փոխադարձ իրաւունքներ և պարտքեր ունին մէկմէկու. այս սկզբունքը՝ որ Ս. Աւետարանին վրայ հիմնուած է՝ մեր Ազգային Սահմանադրութեան հիմն եղաւ։

ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

111. Թանզիմաթի հաստատուելէն քիչ մ՚առաջ՝ Ամերիկայէն Մէթոդիստ (առաքեալ) կոչուած մէկ քանի Ամերիկացիներ Պոլիս եկած էին. ասոնք՝ կեղծաւոր կերպիւ Հայ ժողովուրդը խաբելով՝ սկսան նոր տեսակ Քրիստոնէութիւն քարոզել, և ժողովուրդին այնպէս հաստատցնել՝ թէ Հայոց Եկեղեցին հերետիկոս է։

112. Միսիոնարներն իրենց նպատակին հասնելու համար՝ շատ մը ձրի գրքեր թաժնեցին ամենուն. այս գրքերն էին՝ Աստուածաշունչ և Աւետարան և տրիշ ա-

սոնց նման բաներ. նաև ժողովրդեան աչքը շլացնելու համար՝ Պէպէք գիւղին մէջ վարժարան մ'ալ բացին և շատ մը աղքատ տղայք հոն ժողվելով՝ սկսան ձրիապէս ուսմունք և դիտութիւն սովրեցնել անոնց։

113. Միսիոնարները շատ հարուստ էին, վասն զի Ամերիկայի մէջ հաստատուած զանազան ընկերութիւններ միշտ մեծագումար դրամ կը ղրկէին իրենց. և արդարև եթէ Միսիոնարք ուզէին՝ կրնային բարիքներ ընել Ազգին. բայց որովհետև իրենց նպատակը Հայոց եկեղեցին պառակտել էր, ժողովուրդն երբ անոնց չար միտքը հասկըցաւ՝ սկսաւ հակառակիլ։

114. Շատ մը միամիտ խեղճ Հայեր խաբուած էին միսիոնարաց անոյշ խօսքերէն՝ և բողոքական եղած էին, որով՝ Հայ Ազգը երեք մասերու բաժնուեցաւ, այսինքն՝ Լուսաւորչական, Հռովմէական և Բողոքական. այս երեք մասերն ալ՝ ամէն տեղ միմեանց հետ վէճի մէջ էին, և եղաւ այնպիսի ժամանակ մը՝ որ Լուսաւորչականները ու Բողոքականները՝ սաստիկ թշնամութեամբ սկսան մէկմէկու դէմ կռուիլ, և հալածանք հանել. մինչև որ բողոքականք Սուլթանին հրամանաւ՝ իրենց յատուկ Ազգապետ մը դրին։

115. Այն առիթներն էր՝ որ Մինէճի Անդրանիկ՝ ուզելով որ Հայ ժողովուրդը Միսիոնարներէն հեռացնէ, Սամաթիոյ Սահակեան վարժարանը ծաղկեցնել սկսաւ, և սովրեցուց ժողովուրդին՝ որ իրենց զաւակները օտարներուն դպրոցը ղրկելու տեղ՝ պէտք է որ իրենք ընկերութիւններ հաստատեն և իրենց դպրոցները բարեկարգեն։

116. Այսպէս՝ Միսիոնարները առանց ուզելու՝ պատճառ եղան՝ որ մեր Ազգը ուսման վրայ փափաք ձգէ, ընթեցասէր ըլլայ և յառաջանայ ծաղկի, և իրենց քարոզած Բողոքականութիւնն ալ ընդունելի չեղաւ. որովհետև իրենց դէշ ընթացքովը ամենքն ալ վշտացուցին և ամենուն առելի եղան. հիմա Պոլսոյ մէջ խիստ քիչ Բողոքական Հայեր կան, նոյնպէս Հայաստանի մէջ ալ՝ տեղն մը Բողոքականութիւնը ծաւալեցաւ, բայց հիմայ շատ պակսած է։

Գ.

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

1860-1871

ԽՌՈՎՈՒԹԻՒՆ

1860-1893

117. Սարգիս Պատրիարքի ժամանակ՝ մեր Ազգային Սահմանադրութիւնը դործադրուիլ սկսաւ թէ՛ ի Պոլիս և թէ՛ ի Հայաստան. բայց ամիրայներէն շատերը և քանի մը հարուստներ հակառակեցան, որդեր ժողովուրդն ալ համոզեցին, ըսելով՝ թէ Սահմանադրութիւնը՝ անհաւատութիւն կը սովրեցնէ։ Քանի մը անխիղճ վատեր ալ ապրաձայնութիւն հանեցին՝ թէ Հայերը՝ կուգան տաճիկ սէրութենէն ազատամ՝ բիլ և առանձին թագաւորութիւն հաստատել։

118. Այն ատենները՝ ուրիշ նոր խնդիր մ՚ալ երևան եկաւ. Երուսաղէմայ Յովհաննէս Պատրիարքը մեռած էր, Պոլսի Ընդհանուր ժողովը կանոնադրութիւն մը դրկեց Երուսաղէմի վանքը՝ որպէս զի միաբանները անոր համեմատ Պատրիարք ընտրեն. բայց միաբանները այս կանոնադրութիւնը մերժեցին և Սահմանադրութիւնն ալ չընդունեցին. ասոր վրայ Պոլսոյ Հայոց մէջ երկպառակութիւն մտաւ. մէկ մասը այսինքն ամիրայները՝ մեծամեծները և տրգէանները էին, իսկ միւս մասը՝ լուսաւորեալ աղաստաէրները։

119. Այս երկու կուսակցութիւնները հետզհետէ խիստ զօրացան և մէկ մասը Սահմանադրական՝ իսկ միւս մասը հակասահմանադրական անունը առին. ուստի մէկ կողմը Լուսաւորեալ՝ իսկ միւս կողմը Խաւարեալ կոչուեցան։

120. Սարգիս Պատրիարք՝ առաջ Լուսաւորեալներուն կողմն էր, ետքը Երուսղէմի խնդրոյն պատճառով Խաւարելոց կողմը անցաւ. ասոր վրայ Լուսաւորեալները ուզք եղան և Սարգիս Պատրիարքը չուզեցին, մէկզմէկ ծեծեցին, ծեծկուեցան, եկեղեցիները գոցեցին, մէկզմէկ թշնամանեցին, և վերջապէս Սարգիս Պատրիարք հրաժարեցաւ և Ստեփաննոս Եպիսկոպոսը

Պատրիարքական Տեղապահ տրուեցաւ։

121. Ստեփան Տեղապահին ատենը Երուսաղէմի վէճը երթալով մեծցաւ, որովհետև Վանքին միաբանները ոչ Սահմանադրութիւնը կ'ընդունէին և ոչ կանոնադրութիւն. այլ՝ կուզէին որ Երուսաղէմի Պատրիարքը իրենց մէջէն ըլլայ. լուսաւորեալները չանք ըրին՝ որ աղդին իրաւունքը յառաջ տանին. վերջապէս վէճն այնքան մեծցաւ՝ որ Տէրութիւնը միջամտեց Ազգային խնդիրներուն։

122. Սուլթան Մէճիտ մեռած ըլլալով՝ 1861 Յունիս 12 ին՝ իրեն յաջորդեց իւր եղբայրը Ազատ-իլ-Ազիզ. այս Սուլթանին դահակալութենէն քանի մ'օր առքը Սահմանադրութիւնը դադրեցաւ և տէրութիւնը հրաման ըրաւ որ քննուի. այս քննութիւնը երկու տարիի չափ տևեց, և 1863 Մարտ ամսոյ մէջ Սահմանադրութիւնը Ազգին տրուեցաւ Կայսերական հրամանով։

123. Ստեփաննոս Տեղապահի ժամանակը լուսաւորեալներուն և խաւարեալներուն կռիւն այնքան մեծցաւ՝ որ 1862 ին՝ լուսաւորեալք հետզհետէ աճելով՝ օր մը 5-6000 հոգի յանկարծ ժողովեցան և պատրիարքարանի մէջ գտնուող Տեղապահն ու պաշտօնեայները փախցունելով՝ դուռը գոցեցին և բանալին առին։

124. Նոյն օրը՝ Տէրութիւնը գունդ մը զօրք դրկեց Պատրիարքարանի կողմը. ժողովուրդը Մայր եկեղեցին խռնեցաւ և Տէրութեան կողմանէ եկող փաշային խնայուց՝ որ այս խռովութիւնը Ազգային և Կրօնական խնդիրներու համար է. ասոր վրայ զօրքերը ցրուեցան՝ և ամէն ոք իր տեղը դնաց. Պատրիարքարանն ալ քիչ մը ատեն դոց մնալէ ետք՝ վերստին բացուեցաւ։

125. Պոլիսի մէջ Ազգային խռովութիւններ եղած ատեն, Կիլիկիոյ մէջ ալ Զէյթուն լերան Հայ բնակիչները՝ Օսմանեան Տէրութենէն ապստամբեցան տուրքի համար. այս ապստամբութիւնը քանի մը ամիս տևեց՝ մինչև որ Տէրութեան կողմանէ բաղմաթիւ կանոնաւոր զօրք դնացին և զՀայերը հնազանդեցուցին. Զէյթունի Հայերը թէ այր. թէ կին և թէ տղայ՝ կարիճ պատերազմող և անվեհեր ըլլալով՝ մինչև

հիմայ վայրենի աւազակներէ ազատ են։

126. Զէյթունի պատերազմին ժամանակ՝ Փարիզ քաղաքին մէջ՝ Լեոն անունով մէկը երևան եկաւ, և սկսաւ հռչակել՝ թէ ինք Կիլիկիոյ Հայոց Թագաւորայ սերունդէն է. ասիկայ չրջաբերական, բոզոք մ'ալ գրեց Տէրութիւններուն ու խնդրեց՝ որ իր նախահաւերուն իշխանութիւնը հաստատեն, բայց քիչ առենէն այս ամենն ալ ունայն եկան։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԱՆՁՆՈՒԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

127. Սահմանադրութեան և Երուսաղեմայ կռիւներուն ժամանակ՝ Լոսորեանները ինքը ըրին՝ որ ժողովրդեան զաւակները կըրթելէ զատ՝ նաև ժողովուրդն ալ կրթեն. այս նպատակաւ՝ Աբելեան անունով թատրոն մը հաստատեցին 'ի Բերա. այս թատրոնին նման Վասոսեան անունով ուրիշ թատրոն մ'ալ Զմիւռնիոյ մէջ հաստատուեցաւ. նաև հետզհետէ թէ 'ի Պոլիս և թէ Հայաստանի քանի մը կողմերը՝ թատերական ներկայացումներ տրուիլ սկսան, ինչպէս նաև 'ի Թիֆլիզ։

128. Հայաստանի ժողովուրդը լուսաւորելու համար՝ 1860 ին ընկերութիւն մը հաստատուեցաւ 'ի Պոլիս. ասոր անունն էր Անձնուէր ընկերութիւն. այս ընկերութեան նպատակն էր հասակաւոր մարդոց համար կիրակնօրեայ դպրոցներ բանալ և ձրի ուսմունք սովրեցնել. կեդրոնը եղաւ 'ի Պոլիս Ղալաթիա. Հայաստանի գաւառներուն մէջ հետզհետէ ճիւղեր կազմուեցան։

129. Այս ընկերութիւնը տասն և մէկ տարուան մէջ Հայաստանի գրեթէ ամեն կողմերը տարածուեցաւ. դիւաւորապէս Սեբաստիա, Եւդոկիա, Տիգրանակերտ, Քիւրտիստան և այլն. հազարաւոր աշակերտներ հասուց. որոնցմէ շատերն հիմա զանազան օգտակար պաշտօններ կը կատարեն թէ 'ի Պոլիս և թէ Հայրենեաց մէջ։

130. Այս ընկերութեան առաջին հիմնադիրները կըսեպուին. Մարգարեան Յարութիւն և Ղազարոսեան Քրիստոսատուր։

Ղազարոսեան Քրիստոսատուր՝ ամեն կերպով անձնուիրութիւն ըրած է. վասն զի ընկերութեան հաստատուելէն մինչև ցայսօր տասն և մէկ տարիէ 'ի վեր, կիւրակէ օրերը Ղալաթիոյ վարժարանը գնացած և անձնուէր ընկերութեան աշակերտաց դասախօսութիւն ըրած է։

131. Անձնուէր ընկերութիւնը հեռը Հայաստանի մէջ լուսաւորութիւն տարածելով Աղգին մեծ և օգտակար ծառայութիւն մը կատարած է։

Ընկերութեան անդամները ամիսը երկու դահեկան կը վճարեն և այս գումարն աշակերտաց դրական պէտքերուն կը գործածուի։

132. Անձնուէր ընկերութեան զարգացմանն համար ամենայն ջանիւք աշխատողներուն գլխաւորն եղած է Գէորգ Զօպանեան. այս Հայրենասէր և ազնիւ երիտասարդն իր բոլոր կեանքը նուիրած է անձնուէր ընկերութեան օգտին, և Աղգը երախտապարտ է անոր։

133. Անձնուէր ընկերութեան հաստատուելէն քանի մը տարի առաջ՝ այսինքն 1859 ին՝ Պէշիկթաշ գիւղին մէջ Հայկազնեան անունով ընկերութիւն մ'ալ հաստատուած էր. այս ընկերութիւնն ալ Աղգ. վարժարանաց մէջ դասագիրք ըլլալու համար բաւական գրքեր տպագրել տուաւ. բայց հիմայ գրեթէ կործանած է։

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՀԱՅՈՑ

1863-1866

134. Տաճկի կառավարութիւնը՝ Հայոց Սահմանադրութիւնը քննեց և քանի մը օրբադրութիւններ ընելէ ետքը՝ 1863 մարտ ամսոյ մէջ պատրիարքարան ղրկեց. այս Սահմանադրութեան համեմատ՝ ժողովուրդը շուտ մը երեսփոխաններ ընտրեց. այս երեսփոխանները Աղգին վիճակը դադրեցուցին և թէ Պոլսոյ ու թէ Երուսաղեմի պատրիարքներն ընտրեցին. Պոլսոյ պատրիարք եղաւ՝ Թադիադեան Պողոս Բ. եպիսկոպոս. իսկ Երուսաղեմի պատրիարք եղաւ Եսայի վարդապետ։

135. Երեսփոխանութիւնը նաև Քաղա-

քական, Ռուսական, Ցնտեռական, Կրօնական, Դատաստանական և այլն ժողովներ կազմեց և այն ատենէն սկսան Ս. Ղդային դործերը ժողովներով կառավարուիլ ըստ Սահմանադրութեան. դպրոցները բարեկարգուիլ սկսան, Լոսաւորչաբ և Խաւարչաբ բաւերուն գործածութիւնը դադրեցաւ. և գիտական ու աղդասէր անձինք ջանք ըրին՝ որ օր ըստ օրէ ժողովուրդը ուսման ու կրթութեան մէջ յառաջացնեն. այս նպատակաւ ընթերցարաններ բացուեցան։

136. Սահմանադրութեան հաստատութենէն մինչև 1866 թուականը՝ Հայաստանի մէջ դտնուող Ս. Ղդայինները վայրենի Քիւրտերու ձեռքէն չարաչար հարստահարութիւններ կրեցին. այս Քիւրտերն այն ատենան յանդուգն աւազակութիւններ ըրին՝ որ դաւառացի Հայերէն շատերն ըսկըսան խորհիլ՝ որ Ցաճկի Հայաստանը թողուն և Ռուսի Հայաստանը դաղթեն. բայց հեռատես անձինք համոզեցին զիրենք որ իրենց բնիկ երկիրը թողելու տեղ՝ Սուլթանին բողոքին Քիւրտերուն անիրաւութեանց դէմ, այն ատեն Սուլթանն ալ քա-

նի մը անգամ այս և այն կողմ զօրքեր դրկեց՝ որոնք շատ մը ապստամբներ բռնեցին և Պոլիս բերին։

137. Դաւառացի Հայերը նեղութիւն կը կրէին նաև իրենց Ս. Առաջնորդներէն և Իշխաններէն. ատոնք շատ անգամ բռնաւորներուն հետ միանալով՝ չարաչար կը լլկէին մեր խեղճ Ս. Ղդայինները. այս պատճառաւ ոմանք Բողոքական եղան և ոմանք ալ Հռովմէական, իսկ շատերը՝ միացան և իրենց առաջնորդայն ու Իշխաններուն դէմ կռուելով՝ անոնց ուժը կոտրեցին և տեղ տեղ սկսան Սահմանադրութիւնը դործադրելով հաստատութեամբ վարուիլ։

138. 1864 թ՝ Եգիպտոս բնակող Հայոց մէջ մեծ խռովութիւն մ՚ելաւ, վասն զի այն տեղւոյն Փոխանորդ Ս. Առաջնորդը ժողովրդեան հակառակեցաւ՝ և ժողովուրդն ալ ուզեց որ զինքը հրաժարեցնէ. այս խռովութեան պատճառաւ՝ հարիւրի չափ անձինք բանտարկուեցան, որոյմէ քանանն հինդը մինչև մէկ ամիս բանտը մնացին, բայց յետոյ ազատուեցան. այն միջոցին Եգիպտոսի մէջ մաղձայոյզ «քոլերա»

ըսուած հիւանդութիւնն երևան եկաւ և բիւրաւոր մարդիկ մեռան։

139. 1865 ին՝ մաղձայոյզ հիւանդութիւնը Պոլսոյ մէջ ալ ճարակեցաւ՝ այնպէս սոսկալի կերպով՝ որ օրն հազար մարդու չափ կը մեռնէր. այս ախտը երկու ամիսէն աւելի տևեց Պոլսոյ մէջ. և այս միջոցին Պողոս պատրիարք փախաւ Իւկիւտար գընաց, որով Պոլսեցի Հայերը վշտացան և սկսան տրտնջել իրեն դէմ։

140. Հաղիւ թէ մաղձայոյզը դադրած էր, 1865 Օգոստոս 25 ին մեծ հրդեհ մը պատահեցաւ Պոլսոյ քաղաքին մէջ, և գրեթէ քաղաքին մէկ չորրորդ մասն այրեցաւ. այս հրդեհը տասն և ութ ժամ տևեց ու շատ մը Հայաբնակ թաղեր մոխիր դարձուց, և մինչև Գումգաբուի Ս. Գրիգորի պատրիարքարանի քովերը հաղիւ մարեցաւ. այս ծանր պարագային մէջ Պողոս պատրիարք իր դանդաղութեան պատճառաւ յանդիմանուեցաւ։

141. 1866 ին Իրաքասուրեան խնդիր մը եկաւ Ս. Գրիգի մէջ. կրօնականներէն շատերը պնդեցին՝ թէ աշխահականները՝ կրօնաւոր

մարդ մը դատապարտելու իրաւունք չունին, այլ՝ այդ իրաւունքը կրօնականաց է. այս խնդիրը յուզողները եղան դիւանաւորապէս՝ Խորէն վարդապետ Գարֆայեան և Պողոս պատրիարք. Ս. Գրիգորի ժողովականները դէմ կեցան և գործը այնչափ ծանրացաւ՝ որ Տէրութեան հրամանաւ Սահմանադրութիւնը դադրեցաւ, ժողովները լուծուեցան. և Տէրութիւնն իր կողմէն քանի մը անձինք դրաւ՝ որ Պատրիարքարանի և Ս. Գրիգի գործերը տեսնեն։

Տէրութեան՝ այսպէս՝ Սահմանադրութիւնը դադրեցնելը՝ Պէրական հարուածէ կոչուեցաւ։

Վ. ԻՆԹԿ ՀԱՅՈՑ

1866-1869

142. Ս. Գրիգորի Սահմանադրութեան համար եղած պետական հարուածէն ետք՝ Տէրութեան կողմանէ պատրիարքարանի մէջ նստող անձինք՝ Պողոս պատրիարքի հետ սկսան Ս. Գրիգի կառավարութիւնն ընել։

Ս.յն սահմանները Քիւրտերու բռնաբարու-
թիւններն երթալով շատցան, որ.ք սկսան զո-
մանս բռնի մահմէտական ընել, զոմանս
սպանանել, երբեմն կիներ և աղջիկներ
առևանգել և այլն. այս իրողութեանց վրայ
թէ Գաւառացի.ք և թէ Պօլսեցի.ք շատ
վշտացան, և չը կրնալով օգնութիւն մ'ընել,
սկսան Պողոս պատրիարքին և անոր հետ
գործող ժողովքին դէմ հակակրութիւն
ցուցնել։

143. 1868 ին վերջերը Պոլսոյ Հայ
ժողովուրդն սկսաւ բարձրաձայն բողոքել
Պողոս պատրիարքի դէմ. և մինչև անգամ
Գումգաբուի կողմերը գաղանի մասնաժո-
ղով մը կազմուեցաւ՝ որոյ նպատակը պիտի
ըլլար Պողոս պատրիարքը հրաժարեցնել.
այս մասնաժողովը՝ նաև զանազան անձինք՝
սկսան այլ և այլ յայտարարութիւնք ցրուել
և ժողովուրդը պատրիարքին և անոր խոր-
հրդականաց դէմ դրդռել. և արդէն
ժողովուրդն Ազգային հիւանդանոցի խնդ-
րոյն համար սրամտած էր պատրիարքա-
բանի դէմ.

144. Ազգ. հիւանդանոցը քանի մը

տարիէ 'ի վեր շատ խեղճ վիճակի մէջ էր.
պատասպարեալները դրեթէ մերկ և անօթի
էին, Ս. Փրկչեան Վարժարանն ալ բոլո-
րովին խանգարուած էր. 1867 ին՝ Ազգ.
Հիւանդանոցի տեսչութեան պաշտօնը Փա-
նոսեան Կարապետ անուն ազգասէր անձին
յանձնուեցաւ. ասիկայ շատ նուէրներ հա-
ւաքեց. վեց ամիսի չափ պատասպարեալնե-
րը խնամեց, նաև Վարժարան մ'ալ շինել
սկսաւ. բայց իր թշնամիները զանազան
արգելքներ հանեցին և գինքը դադրեցուցին. այս դէպքը ժողովրդեան
սրտին շատ ծանր եկած էր։

145. 1869 ի Յունվարի սկիզբները
Պոլսոյ մէջ բոլոր Հայ ժողովուրդն ոտք
ելաւ և եկեղեցեաց մէջ Պողոս պատրի-
արքի անուան յիշատակութիւնն արգի-
լեց. հաղարաւոր անձինք Մայր եկեղեցին
ժողովեցան և Յունվար 3 ի օրը Ս. Ծննդեան
խթման իրիկուն՝ երբ Պողոս պատրիարք
ալ եկեղեցւոյ մէջ էր, ժողովուրդը մեծ
խռովութիւն հանեց և ամենքն ալ "պատ-
րիարքը չենք ուզեր", աղաղակեցին։

146. Այս խռովութեանց առեն՝ ոս-

տիկանութեան կողմանէ ութսունի չափ դինուորները մէկ քանի գիշեր պատրիարքարանի պահպանութեանը հսկեցին, որպէս զի յարձակումէ ազատ պահեն. միւս կողմանէ Ազգին մէջ դրդռութիւնը հետըզհետէ աւելցաւ, և կրօնականք ալ ժողովրդեան հետ միացան. այն ատեն՝ քանի մ'եպիսկոպոսներ Կառաւարութեան դուռը դացին և խնդրեցին՝ որ կառավարութիւնն զՊօղոս պատրիարքը հրաժարեցնէ. քանի մ'օրէն Պօղոս հրաժարեցաւ և տեղը պատրիարքական Տեղապահ դրուեցաւ Ս. Բիստակէս եպիսկոպոս։

Վ. Ա. Բ Ա Ր Ա Ն Ք

1869 ՏԱՐԻՈՑՆ ՄԷՋ

147. 1867 տարւոյն սկիզբները Սամսթիոյ թաղը՝ մեծ հրդեհ մը պատահեցաւ և Հայոց տուներուն մեծ մասը այրեցաւ. այրեցան նաև՝ Ս. Գէորգ եկեղեցին և Սահակեան և Նունեանդպրոցները. քիչ մ'ետքը թէպէտ թաղեցիք Սահակեան դպրոցին տեղը փայտեայ շէնք մը կառուցին, բայց աղջկանց համար դպրոց չկար, 1869 ի սկիզբը Կարապետ Փանոսեան՝ Ազգապետեան անունով ազատ վարժարան մը բացաւ և 160 ի չափ աղջիկներ ժողվելով զանազան ուսումներ՝ գիտութիւններ արուեստ ու լեզուներ ուսուցանել սկսաւ. այս վարժարանը մինչև ցարդ կը շարունակուի և բարի վիճակ մը ունի։

148. Ազգապետեան վարժարանէն յառաջ 1866 ին Գումգաբուի կողմերը թէ մանչ և թէ աղջիկ ազգայոց համար ուրիշ ազատ վարժարան մ'ալ բացուած էր Մը-կըրտիչ Մեղպուրեան պատուելին Ղանքովը. որ մինչև հիմա կը շարունակէ և Ազգին գոհունակութեանն արժանի եղած է. այս ազատ վարժարաններն Ազգին եկեղեցիներէն ամսական չեն ընդունիր, և կալուածներ ալ չունին, այլ աշակերտներուն ամսէ ամիս տուած թոշակովը կը-կառավարուին։

149. Ազգապետեան և Մեղպուրեան Վարժարաններուն հետ նաև Պօլսոյ թաղային դպրոցներն ալ սկսան յառաջ երթալ վա-

սէն դի ուսումնասէր և լուսաւորեալ անձինք ամէն զոհողութիւն ընելով և ժողովրդեան տգէտ մասին դէմ կռուելով սկսան հետզհետէ Վարժարանաց տեսչութիւններն իրենց վրայ առնուլ և բարեկարգել զանոնք, բայց մինչև հիմայ նոյն իսկ Պոլսոյ մէջ կան այնպիսի Վարժարաններ՝ ուր աշակերտք գրեթէ ոչինչ բաներ կ'ուսանին։

150. Այս զանազան Վարժարաններէն զատ Խասգիւղ Գիշերօթիկ Վարժարան մ'ալ բացուեցաւ 1866 ին՝. Շահ Նազարեան անունով, վասն դի Շահ Նազարեան Կարապետ անուն բազմահմուտ և հայրենասէր Վարդապետը՝ մեռնելու ժամանակ բաւական մեծ գումար մը կտակ ըրած էր ազգին՝ սա պայմանաւ որ գիշերօթիկ դպրոց մը բացուի և այն դրամին տոկոսովը 12 Հայաստանի տղայք հոն ձրիապէս խնամուին և ուսանունք առնուին։

151. Կարապետ Վարդապետ՝ իր այս կտակին կատարող մը որոշած էր Զնուպար փաշայ՝ որ այս մեծանուն Հայը՝ Եգիպտոսի փոխարքայութեան գլխաւոր պաշտօնեայն է, Շահ Նազարեանի կտակը կատարելու համար իր կողմէն ալ մեծ գումար մը նուիրեց և ասոնցմով հաստատեց Խասգիւղի Շահնազար — Նուպարեան վարժարանը ուր հարիւրէն աւելի աշակերտներ կան և զանազան ուսմունք, գիտութիւնք և լեզուներ դաս կ'առնուն։

152. Պոլսոյ մէջ այս ամէն վարժարաններէն զատ՝ նաև Գալատայ մէջ Ազգային Վարժարաններն հետզհետէ ծաղկել սկսան, Պոլիսէն դասատուներ գրկուեցան շատ տեղերու և հիմայ յոյս կայ որ քիչ առենէն Հայաստանի ամէն կողմը մեր ազգը ուսման և կրթութեան մէջ պիտի յառաջանայ, որով իր նախնի փառքը վերըստին պիտի փայլեցնէ իր վրայ աւելի պայծառ կերպիւ, և օտարաց ալ նախանձելի պիտի ըլլայ։

1869 ՏԱՐԻՆ

153. Պոլսոյ Պատրիարքի հրաժարելէն ետքը՝ Արիստակէս եպիսկոպոս Պատրիարքութեան Տեղապահ կարգուեցաւ Օսման-

եան տէրութեան կողմանէ, այս անձը բաբեսիրտ և ազգասէր ըլլալուն ժողովուրդը դինքը սիրեց. տէրութեան կողմանէ քանի մը անձինք այլ նոր պաշտօնեայ եղած էին Ազգային դործոյ. այն անձանց ղեկխաւորն էր Օտեան Գրիգոր՝ որ խոհեմութեամբ ազգին մէջ ծագաց խռովութիւնները հանդարտեցնելու ջանք ըրաւ և ազգին օգտակար ծառայութիւններ մատոյց։

154. Սրիստակէս Տեղապահի ժամանակ Մուշի կողմերու հայերը Քիւրտերու երեսէն անհնարին նեղութիւններ կը կրէին այս խեղճութեանց առաջքն առնելու համար Խրիմեան Մկրտիչ անուն հայրենասէր Եպիսկոպոսը ազգու բողոք մը դրեց Կարնոյ Կուսակալին և խնդրեց որ կառավարութեան կողմանէ զօրքեր և քննիչներ ղրկուին Հայաստանի մէջ Քիւրտերուն դործած չարութիւններուն առջևն առնելու համար, այս մեծանուն Եպիսկոպոսը Հայրիկ կը կոչուի, և 1863 ին՝ առաջին անդամ ըլլալով Տպարան մը հաստատեց Հայաստանի մէջ. ժառանգաւորաց դպրոց մ'ալ բացաւ և բաւական աշակերտներ հայցուց Ազգին։

155. Խրիմեան Եպիսկոպոսի ըրած այս խնդրէն անմիջապէս ետքը՝ Կարնոյ Կուսակալը զօրաց բանակով մը Մուշ դընաց. հոն ապստամբ քիւրտերը բռնեց և Պոլիս ղրկեց. անիրաւութիւնները ջնջեց, ժողովուրդը խաղաղեցուց, և վերստին Կարին քաղաքը դարձաւ. այս իրողութիւնները մեծ ուրախութիւն պատճառեցին Պոլսոյ Հայոց, և ամենքն ալ գոհ եղան. իսկ այն ապըստամբ և վայրենի Քիւրտերը քիչ մ'ատեն Պոլիսի մէջ կեցան. բայց չը-գիտցուիր թէ դատաստան եղա՞ւ անոնց համար, և ի՞նչ պատիժ տրուեցաւ։

156. Հայաստանի մէջ այս դէպքերը կատարուած ատեն՝ Սրիստակէս Տեղապահ իր պաշտօնէն հրաժարեցաւ. և նոր Պատրիարքի մ'ընտրութեան համար տէրութեան կողմանէ հրաման եկաւ՝ որ Ազգին Երեսփոխանները ժողով կազմեն և մէկու մը համար քուէ տան. նաև տէրութիւնն հրաման ըրաւ որ դադարեալ Սահմանադրութիւնը նորէն դործադրուի՝ մինչև որ նոր Սահմանադրութիւն հաստատուի. բայց որովհետև Երեսփոխաններուն թիւը շատ

պակսած էր, և ժողովուրդէն շատերն Ե-
րեսփոխաններուն դէմ էին, ուստի նորէն
խռովութիւն ելաւ ազգին մէջ, և ժողո-
վուրդն սկսաւ պահանջել՝ որ նախ Սահ-
մանադրութեան համեմատ Երեսփոխան-
ները ընտրուին, ետքը կատարուի Պատ-
րիարքի ընտրութիւնը։

157. 1869 Օգոստոս 28 ին՝ Երեսփո-
խանները Բումքաբուի Մայր Եկեղեցին
ժողվուեցան որ Պատրիարք մ'ընտրեն. հա-
ղարաւոր Ազգայինք հոն լեցուեցան. ոմանք
այս՝ և ոմանք ալ այն անձը կ'ուզէին որ
Պատրիարք ըլլայ. երկար վէճերէ ետքը՝
որոշուեցաւ որ շաբաթ մը ետքը նորէն
ժողով ըլլայ և Պատրիարքն ընտրուի. այս
մէկ շաբթուան միջոցին նոր ձայն մ'ալ
ելաւ ժողովրդեան մէջ. հանրագրութիւն
մը տեսնուեցաւ, որուն մէջ գրուած էր որ
կամ Խրիմեան Մկրտիչ Եպիսկոպոս Պատ-
րիարք պիտի ըլլայ, կամ Նախորդ Տեղա-
պահ Սրիստակէս Եպիսկոպոս։

ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

158. 1869 սեպ՝ 4 ին՝ Մայր Եկե-
ղեցւոյ մէջ Երեսփոխանաց ժողով մ'եղաւ.
ժողովուրդէն ալ չորս հինգ հազար հոգի
հոն հաւաքուած էին. նաև ազգին կողմա-
նէ պատգամաւորութիւն մ'ալ եկած էր
չորս հազար ստորագրութիւնով. այս պատ-
գամաւորութեան նպատակն այն էր՝ որ
Երեսփոխանաց պիտի ծանուցանէր թէ՝ Ազ-
գը կ'ուզէ որ կամ Խրիմեան Պատրիարք
ըլլայ, կամ Սրիստակէս Տեղապահ. ժո-
ղովը բացուելուն պէս Օտեան Գրիգոր Ե-
կար առենախօսութիւն մ'ըրաւ և ամբաս-
տանեց այն մարդիկը՝ որոնք զանազան կիր-
քերով ժողովուրդը զայրացուցած էին, և
վերջացուց իր խօսքը ըսելով թէ «Ազգը
կ'ուզէ որ Խրիմեան Հայրիկ պատրիարք
ըլլայ. ես ալ կը տեսնեմ որ Ազգին մէջ
անկէ աւելի արժանաւոր Եպիսկոպոս մը
չունինք, ուստի կ'առաջարկեմ որ Խրիմ-
եան Հայրիկին համար քուէ տաք»։

159. Երբոր Խրիմեանի անունը լսուեցաւ՝ Եկեղեցւոյն մէջ եղող բոլոր ժո-

ղովուրդը միաբերան «Խրիմեանը կուզե՛նք» աղաղակեց. ծափահարութիւններով Եկեղեցիին կամարները դոռացին. Օտեան Գրիգոր՝ ժողովուրդէն խնդրեց որ լուռ կենայ. և ըսաւ թէ «քանի որ Ազգն զԽրիմեանը կուզէ, ուրեմն կեցցէ՛ Խրիմեան Պատրիարք», և ամեն ներկայ եղողները կրկնեցին «կեցցէ՛ Խրիմեան Պատրիարք. կեցցէ՛ նաև Օտեան Գրիգոր». անմիջապէս քուէարկութիւն եղաւ, 45 հոգիէն 42 ժողովականներ քուէ տուին Խրիմեանի համար. և այսպէսով Ազգին բաղձանաց համաձայն՝ Խրիմեան Տաճկաստանի Հայոց Պատրիարք ընտրուեցաւ։

Եթէ ժողովուրդն առաջուց այնչափ չը յուզուէր և անհոգ կենար, Խրիմեանի Պատրիարք ընտրուիլն անկարելի էր։

160. Ընդհանուր ժողովոյ աւարտումէն ետք՝ անմիջապէս հեռագրով Խրիմեան Մկրտիչ Եպիսկոպոսին իմաց տրուեցաւ՝ որ Պատրիարք ընտրուեր է. որովհետև այն ատեն՝ Խրիմեան 'ի Մուշ կը գտնուէր. ուստի պատրաստուեցաւ ճամբայ ելնել և Պոլիս գալ. Հայաստանի ամեն կողման

ազգայիններն երբ Խրիմեանի Պատրիարք ընտրուիլը լսեցին՝ շատ ուրախացան, վասն զի առաջուց անոր հայրենասիրութեան բազմաթիւ փորձերը տեսած էին։ Մուշէն մինչև 'ի Պոլիս ճամբու վրայ եղող բոլոր քաղաքաց բնակիչները՝ մեծամեծ պատրաստութիւններ տեսան Հայոց սիրելի Պատրիարքին արժանաւոր ընդունելութիւն մը ընելու համար։

161. Խրիմեանի Պատրիարք ընտրուիլը կառավարութիւնն երբ լսեց՝ շատ ուրախացաւ, և հրաման ըրաւ Կարնոյ Կուսակալին՝ որ փառաւոր հիւրընկալութեամբ պատուէ Հայոց Նորընտիր Պատրիարքը. նաև Պոլիսէն Տէրութեան կողմանէ յատուկ շոգենաւ դնաց 'ի Տրապիզոն՝ որպէս զի զԽրիմեան Պոլիս բերէ. այս շոգենաւով գընացին Ազգին կողմանէ զրկուած հրաւիրակները, և այսպէս հասարակաց սիրելի Հայրիկը բոլոր անցած տեղերէն՝ մանաւանդ Կարնոյ և Տրապիզոնի ազգայիններէն շքեղ ասպնջականութիւն վայելելով՝ Նոյեմբեր ամսոյ սկիզբը Կ. Պոլիս հասաւ և Պատրիարքական դահուն վրայ բազմեցաւ։

162. Խրիմեանի գալէն եաք՝ անմիջապէս Ս.ղդ. Սահմանադրութիւնը ըսկսաւ գործադրուիլ. Տէրութեան կողմանէ դրուած խառն ժողովը լուծուեցաւ. երեսփոխանաց թիւը պակսած էր, հետզհետէ Պոլսոյ թաղերուն մէջ քուէարկութիւն եղաւ, և Գաւառներէն ալ նորընտիր երեսփոխաններ եկան, ու Ս.ղդ. Ընդհանուր Ժողովն ամբողջանալով՝ Ս.ղդ. խնդիրներն սկսան կարգի դրուիլ. Ժողովուրդը քանի մը տարիէ 'ի վեր Ս.ղդ. տուրքը տալէ դադրած էր, վերջապէս սկսաւ վճարել, և Սահմանադրութիւնն ալ վերաքննուիլ սկսաւ. բայց կը վախցուի որ այդ վերաքննութիւնն աւարտելիք չ'ունենայ։

163։ Պատրիարքարանն ու Ս.ղդ. հիւանդանոցը պարտուց ներքև կը ճնշուէին. Խրիմեան հայրիկ անձամբ Պոլսոյ եկեղեցիները և հարուստներուն տունները դընաց և խնդրեց՝ որ ամէն մարդ իւր հարստութեանը չափով նուէր մը տայ Ս.ղդ. պարտուց վճարմանն օգնելու համար. ժողովուրդն ուրախութեամբ իր քսակը բացաւ, և քիչ առենէն քանի մը հազար ոսկի հաւաքուեցաւ, և յոյս կայ որ մինչև մէկ տարի Ս.ղդին պարտքը բոլորովին կը լմննայ։

164. Խրիմեան պատրիարք՝ չանք բրաւ որ Ս.ղդին վարժարանները բարեկարգուին և Ս.ղդ. Կրթութեան Խորհուրդ մը սահմանեց, բայց այս խորհուրդն ոչինչ կրցաւ ընել. միւս կողմանէ ժողովուրդը թաղային վարժարանները զարգացնելու փոյթ տարաւ. Գուղկունճուք թաղին մէջ 1871ին ընկերութիւն մը կազմուեցաւ սա նպատակաւ՝ որ դրամագլուխ հաւաքէ և Հայաստանի մէջ գիշերօթիկ վարժարան մը բանայ. այս նպատակն ունեցող ընկերութիւններ հետզհետէ կազմուելու վրայեն։ Ս.ղդին վարժապետներէն ալ ոմանք իրենց մէջ ընկերութիւն մը կազմելով՝ 1871 յունիս ամսոյ մէջ առաջին վարժարան մը բացին յԽասկիւղ, նաև ուրիշ աղատ վարժարաններ ալ բացուելու վրայեն. ասոնցմէ մէկը պիտի բանայ Փանոսեան Կարապետ՝ մանչ տղայոց համար, իսկ միւսը Օրիորդ Ս. Ոսկանեան՝ աղջիկ տղայոց համար։

165. Խրիմեանի ատեն՝ դաւառային ժողովրդեան և առաջնորդաց մէջ մեծամեծ վէճեր ելան. արդէն Պօղոս պատրիարքի ժամանակէն՝ ի վեր Սեբաստիոյ աղգայնոց աղատամիտ և լուսաւորեալ մասը՝ տեղւոյն Կարապետ եպիսկոպոսը առաջնորդ չ՚ուզելով Կ. Պոլիս ղրկած էր, այս վէճը մինչև հիմայ տակաւին կը շարունակէ թէ Կ. եպիսկոպոսի և թէ անոր փոքրաւորն եղող Պետրոս վարդապետի դէմ։ Վերջին ատեններս Պրուսայի առաջնորդ Բարթողիմէոս եպիսկոպոսին համար ալ մեծամեծ յուզմունք տեղի ունեցան, և տակաւին կը շարունակուին. Պոլսոյ մէջ ալ թաղային վէճերը պակաս չեն. ասոնցմէ կը հասկցուի թէ Հայ Ազգն օր ըստ օրէ յառաջադիմելու և լուսաւորուելու վրայ է։

166. 1864 ին՝ Վանայ մօտ Աղթամարայ Պիւզանդիւլ անուն կաթողիկոսն սպանուեցաւ, և յաջորդութեան պատճառաւ մեծ խռովութիւն ելաւ Ազգին մէջ. Խաչատուր անուն եպիսկոպոս մը Վանքին միաբաններուն ձեռօք կաթողիկոս օծուած էր, բայց Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնն անվաւեր հրատարակեց Խաչատուրի կաթողիկոսութիւնն և զինքը Պոլիս բերել տուաւ, ուր կը մնայ մինչև ցայժմ։

167. Աղթամարայ կաթողիկոսին ընտրեալ ատենները՝ Սոյն Կիրակոս կաթողիկոսն ալ վախճանեցաւ. Նիկողոս անուն եպիսկոպոսն ինքզինք կաթողիկոս ձեռնադրել տուաւ, ըսելով թէ «Սոյն կաթողիկոսութիւնն Աստուածահան սերունդին ժառանգութիւնն է, և ես ալ այն սերունդէն ըլլալով՝ արժան է որ կաթողիկոս ըլլամ». բայց Կ. Պոլսոյ կեդրոնական վարչութիւնն անվաւեր հրատարակեց ասոր կաթողիկոսութիւնը և զինքը Պոլիս բերել տուաւ։ Նիկողոս քիչ մ՚ատեն Պոլսոյ մէջ մնալէ յետոյ Կիլիկիա փախաւ, բայց վարչութիւնը վերջապէս զինք Պոլիս բերել տուաւ 1871 Օգոստոս 21 ին։

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՀԱՅԵՐ

1829-1871

167. Հռովմէական այրինքն կաթոլիկ

կամ պապական ըսուած Հայերն երբ Լատ. եկեղեցիէն բոլորովին զատուեցան, Սուլթանին հրամանաւն իրենց համար զատ պատրիարք ու պատրիարքարան ունեցան. և երբեմն խաղաղութեամբ ու երբեմն խռովութեամբ բաւական ժամանակ անցուցին։

168. Կաթոլիկ հայոց վերջին և սաստիկ խռովութեանց պատճառ եղաւ Անտոն Հասունեան անուն վարդապետը՝ որ չէ թէ Հայ՝ այլ Ասորի էր. սատկայ փառասիրութեամբ ուզելով՝ որ Կաթոլիկ հայոց պատրիարք ըլլայ և Հռովմայ Պապէն պատիւ ընդունի, ինքը ըրաւ որ Կաթոլիկ հայերը կամաց կամաց բոլորովին հեռացընէ Լուսաւորչական հայերէն և զամենն ալ Լատինացնէ. Հռովմայ Պապն՝ Հասունեանի ուժ տալու համար՝ փառաւորեց զանի, և երբ Պոլսոյ պատրիարքը մեռաւ՝ Պապին հրամանաւը Հասունեան յաջորդեց անոր։

169. 1867 ին՝ Հռովմէական հայոց Լիբանանու կաթուղիկոսը մեռաւ, և Հասունեան առանց ազգին հաւանութիւնն

առնելու՝ Հռովմ գնաց ու կաթողիկոս ձեռնադրուեցաւ Պապէն. Պոլսոյ կաթոլիկ ազգայնոց մէջ մեծ խռովութիւն մ'ելաւ. ոմանք կ'ուզէին զՀասունեան, բայց երևելի դիտակներ, վարդապետներ ու ժողովրդեան բոլոր լուսաւորեալ մասը դէմ կեցան, և Պապին բողոքեցին Հասունեանի դէմ. Պապն զՀասունը պաշտպանեց և թուղթ գրկեց Պոլսի Կաթոլիկ հայոց՝ որով կը ծանուցանէր թէ Կաթոլիկ հայոց բոլոր եկեղեցիներն ու ազգային հաստատութիւնք և ստացուածք, ամենն ալ պապական աթոռոյն իրաւասութեանը ներքև անցած են, և ժողովրդեան պարտքն է առանց դիտողութեան՝ Հասունեանի հնազանդիլ։

170. Պապին գրկած կոնդակը՝ լուսաւորեալ Կաթոլիկներուն կողմէն չընդունուեցաւ, իսկ Հասունեանի պաշտպաններն ընդունեցին, և այսպէսով երկու մեծ կուսակցութիւններ կազմուեցան. Հասունեանի հակառակ եղողներն՝ ըսուեցան Հակահասունեանք, իսկ կողմնակից եղողները՝ Հասունեանք կոչուեցան. սաս-

տիկ վէճեր եղան։ Ս. յս միջոցներուն Հռովմի մէջ մեծ ժողով մը կազմուեցաւ, հաղարաւոր կրօնականներ միացան և Հռովմայ Պապն անսխալ հրատարակեցին. բոլոր իմաստուն մարդիկ այս անսխալութեան դէմ խօսեցան ըսելով որ Ս. աստուած է միայն անսխալ. Հասունեան և իր կողմնակիցները Պապին անսխալութիւնն ընդունեցին. իսկ Հակահասունեանք մերժեցին։

171. 1869 յունվար 25ին շատ մը Հակահասունեան ժողովուրդ և Վարդապետներ հաւքուեցան 'ի Բերա Համազգեայ անուն ընկերութեան տունը. հոն բողոքեցին Հասունեանի աղգակործան դիտաւորութեանց դէմ. դաւանագիր մ'ստորագրեցին, որով կը ցուցնէին թէ իրենք չ'են ընդունիր Պապին և անոր պաշտօնէից անիրաւ վճիռներուն հնազանդիլ. այս դաւանագիրն ստորագրողները կոչուեցան Ս. ԲԵԼԼԱՆ ԿԱՌՈՒԼԻ Հայ. ասոնք Պոլսոյ քանի մ'եկեղեցիները ձեռք անցուցին. առանձին Պատրիարքարան մը հաստատեցին, և Բ. Դռնէն խնդրեցին՝ որ Պատրիարք մ'ընտրելու արտօնութիւն տայ իրենց։

Ս. յսպէսով Հակահասունեանք իսպառ բաժնուեցան Հասունեաններէն՝ որք ըսուեցան Պապական Հայեր։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԳՈՐԾԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

172. 1870 սեպտ. ամսոյ մէջ 'ի Պոլիս նոր ընկերութիւն մը կազմուեցաւ. որուն անունն է Գործասէր Ընկերութիւն. այս ընկերութեան նպատակն է դրամ հաւաքել և տպարան ու գրատուն հաստատել, և լրագիր հրատարակել. այս ընկերութիւնը մինչև հիմայ 36 անդամ ու 500 Օսմ. լիրայ դրամագլուխ ունեցած է. այժմ արդէն ընկերութեան արդեամբ երկու գիրք ապուած է. և լրագիրն ալ կը հրատարակուի Ս. բարբ անունով։

173. Ս. յս ընկերութեան անդամ գրբուիլ ուզողը՝ պարտի ընկերութեանս վարչական ժողովոյն ներկայանալ կամ նամակ մը գրել՝ և տասն օսմ. լիրայ վճարելով

ամբողջ բաժնի ստացագիր մը ընդունիլ. ուզողը կրնայ հինգ ոսկի վճարելով՝ կէս, կամ երկուք ու կէս վճարելով՝ քառորդ բաժին առնուլ. իւրաքանչիւր տարի ընկերներն իրենց ստացած բաժիններուն համեմատ՝ եղած ընդհանուր շահուն հարիւրին 30էն 75ը իրենց մէջ պիտի բաժնեն :

174. Ընկերութեան գործերը վարչական ժողովով մը կը կառավարուին. այս ժողովը ութ անձերէ կը բաղկանայ. որոց երեքն ընկերութեան հիմնադիրներն են. այս հիմնադիրք՝ երեսունական ոսկի կը վճարեն. իսկ միւս հինգ անդամները քըսանական ոսկի. ընկերութեան տեսուչը հիմնադիրներէն կ'ընտրուի, և իր պաշտօնը չորս տարի պիտի տևէ. իսկ վարչ. ժողովը երկու տարին անդամ մը կ'ընտրուի :

175. Ընկերութեան անդամները կ'ընտրեն նաև երկու քննիչ. սանք բովանդակ տարւոյն մէջ վարչական ժողովոյ գործերը կը քննեն և տարին անդամ մը տեղեկագիր շինելով՝ ընկերաց ժողովոյն կը ներկայացնեն. ընկերները սովորաբար տարին երկու անդամ կը դումարուին, մէկ մը Ապրիլ 30ին՝ մէկ մ'ալ Սեպտ. 30ին. այս ժողովներն ընդհանուր հաշիւները կը տեսնեն, և հարկ եղած կարգադրութիւնները կ'ընեն.

Կը յուսանք՝ որ լուսաւորութիւն ու յառաջադիմութիւն սիրող Աղգայինք կը քաջալերեն այս բարենպատակ ընկերութիւնը :

ՎԵՐՋ

NL0015722

2013